ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

2 ---------- ՆԱԽԱԲԱՆ

3 ---------- ԴՊՐՈՑՈՒՄ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

4 ---------- ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5---------- ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

8---------- ԴՊՐՈՑԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ / ԱՆՁՆԱԳԻՐԸ/

12---------- ԴՊՐՈՑԻ ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ

14---------- ՆՊԱՏԱԿՆԵՐՆ՝ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ

16---------- ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

18---------- ՍՈՎՈՐՈՂՆԵՐ

20---------- ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ

22---------- ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ԵՎ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

25---------- ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

27---------- ՆԵՐԴՊՐՈՑԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

29---------- ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ և ԴՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

30---------- ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

31---------- ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆԻ ԿԱԴՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

32---------- ԴՊՐՈՑԻ ԱՌՋԵՎ ԾԱՌԱՅԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

34---------- ԴՊՐՈՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ

37---------- ԸՆՏԱՆԻՔ-ԴՊՐՈՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ

39---------- ԱՇԽԱՏԱՆՔ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՀԵՏ

41---------- ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ

43---------- ԴՊՐՈՑԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐՆ ՈՒ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

45---------- ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱԿՆԿԱԼՎՈՒՄ Է, ՈՐ ԴՊՐՈՑՈՒՄ՝

46---------- ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

47---------- ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ, ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

1. ՆԱԽԱԲԱՆ

Զարգացման ծրագիրը հանրակրթական ուսումնական հաստատության կարևորագույն ռազմավարական փաստաթուղթ է, որի հիման վրա պլանավորվում է աշխատանքը դպրոցում՝ ապահովելով դպրոցի 5 տարվա զարգազման տեսլականը: Ժամանակակից աշխարհում գրեթե բոլոր ոլորտներում փոփոխություններն աննախադեպ արագ ու դինամիկ են ընթանում: Նման փոփոխությունների առանձնահատկություններից մեկն այն է, որ գիտության ու տեխնիկայի ընձեռած նոր հնարավորությունները արագորեն ներթափանցում են հասարակական հարաբերությունների, կյանքի կազմակերպման, աշխատանքի, գիտելիքների ձևավորման ու փոխանցման ոլորտ: Շարունակաբար նորացվող, զարգացող ու փոփոխվող գիտելիքները և դրա ստեղծման համար անհրաժեշտ նորարարությունն ու ստեղծագործականությունը դառնում են մրցունակության և արդյունավետության բարձրացման կարևորագույն գործոններ՝ թե՛ անհատական, թե՛ ներպետական և թե՛ համաշխարհային մակարդակներում: Գիտելիքն այսօր այլևս լոկալ բնույթ չի կրում. ցանցերի ու հեռահաղորդակցման դարաշրջանում աշխարհի որևէ ծայրում ստեղծված գիտելիքն արագորեն տեղայնացվում է աշխարհի մեկ այլ անկյունում: Նման պայմաններում առավել արդյունավետ ու հաջողակ են այն անհատները, խմբերն ու պետությունները, որոնք կարողանում են կիրառել նորագույն գործիքների ավելի մեծ տեսականի և բաց են շարունակ տեղի ունեցող փոփոխությունների առաջ՝ միևնույն ժամանակ չկորցնելով իրենց ինքնությունը: Նրանք տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) միջոցով ցանցավորված են միմյանց և աշխարհի հետ, կարողանում են աշխատել թիմերով, ստեղծագործաբար են մոտենում կյանքի առաջադրած խնդիրներին և պատրաստ են շարունակաբար սովորել: Այս ամենին հասնելու հիմնական ճանապարհը դպրոցական կրթությունն է, որի ձևերն ու բովանդակությունը, ինչպես նաև կրթական միջավայրը փոխվում են՝ արձագանքելով գիտելիքի փոխանցման և տարածման արագընթաց տեմպերին ու պահանջներին: Համաշխարհային արդի զարգացումներն իրենց անմիջական ներգործությունն են ունենում հանրակրթական դպրոցի վրա՝ առաջադրելով տարատեսակ խնդիրներ: Գիտատեխնիկական առաջընթացի աննախադեպ արագության, բարձր տեխնոլոգիաների հարաճուն ներդրման և կիրառման հետևանքով ազգային և համաշխարհային տնտեսություններն անընդհատ վերակառուցվում են: Արդյունաբերական տնտեսությունը վերաճում է գիտելիքների տնտեսության, իսկ հասարակությունը դառնում է տեղեկատվական: Անընդհատ փոփոխվում է աշխատանքային միջավայրը, նորովի են կազմավորվում և վերաբաշխվում աշխատատեղերը: Որակյալ մասնագետների պահանջարկն առաջնահերթ է դարձնում աշխատանքային շուկայի պահանջներին արագորեն հարմարվելու և տեղաշարժվելու կարողությունը:

Հանրակրթության դերն աճում է. միաժամանակ կրթությունը վերաճում է մի գործոնի, որը նպաստում է հասարակության մեջ մարդու դերի առավել արժևորմանը՝ զարգացնելով համակեցության, հանդուրժողականության և արժեքային որակներ:

Հանրակրթության համակարգում տեղի են ունենում համակարգային փոփոխություններ, որոնք պայմանավորված են ոչ միայն ազգային առանձնահատկություններով, այլև համաշխարհային զարգացումներին բնորոշ աշխարհաքաղաքական, ժողովրդագրական, մշակութային, սոցիալական գործոններով:

Հանրակրթության էական բարեփոխումը և առաջանցիկ զարգացումը դառնում են անհրաժեշտ ու անխուսափելի: Պետության և ազգի անվտանգության ապահովման ու հզորացման գործում գերակա խնդիր է դառնում պետական մտածելակերպ ունեցող և ապագայի մարտահրավերներին դիմակայելու պատրաստ մարդու ձևավորումը:

Կրթական բարենպաստ միջավայրի ստեղծման անհրաժեշտությունը ենթադրում է ուսուցման ավանդական մոտեցումների վերանայում և հանրակրթական ուսումնական հաստատությունների նկատմամբ վերաբերմունքի ճշգրտում:

2.ԴՊՐՈՑՈՒՄ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետությունը հռչակում և երաշխավորում է հանրակրթության բնագավառի զարգացումը՝ որպես անհատի և հասարակության անվտանգության և կայուն զարգացման ապահովման, հայ ինքնության պահպանման կարևոր երաշխիք:

Հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորումն է:

Հայաստանի Հանրապետությունը համընդհանուր ներառական կրթությունը հռչակում է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք: Ներառական կրթության քաղաքականությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր երեխայի կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովմանը:

Հայաստանի Հանրապետությունն ապահովում է կրթության ժողովրդավարական և աշխարհիկ բնույթը:

Միջնակարգ կրթությունը պարտադիր է՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է:

Հայաստանի Հանրապետությունում իրականացվում է 12-ամյա միջնակարգ կրթություն:

Հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպական հիմքը կրթության զարգացման պետական ծրագիրն է:

Հայաստանի Հանրապետությունում հանրակրթությունն իրականացվում է գրական հայերենով՝ «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Հանրակրթությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր սովորողի՝

1) մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական զարգացմանը.
2) մարդկային արժանապատվության պահպանմանը.
3) իր ընդունակություններին, կարողություններին և առողջությանը համապատասխան ուսումնական միջավայրում նրա հասարակական հարմարեցմանը.

4) ինքնասպասարկման ունակությունների ձեռք բերմանը և ինքնուրույն կյանքի նախապատրաստմանը.
5) մասնագիտական կողմնորոշմանը և մասնագիտական, աշխատանքային գործունեության նախապատրաստմանը.
6) ընտանեկան կյանքին պատրաստվածության ապահովմանը.
7) որպես ապագա քաղաքացու ձևավորմանը:

3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՀՀ ԿԳՄՄՆ «Նոր Հաճնի ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի առաջիկա հինգ տարիների զարգացման ծրագիրը կազմվել է հանրակրթության ոլորտը կանոնակարգող հետևյալ նորմատիվ իրավական ակտերի պահանջներին համապատասխան.

Հայաստանի Հանրապետության «Սահմանադրություն», «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին», «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքներով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով, այլ օրենքներով և դրանցից բխող ենթաօրենսդրական ակտերով:

ՀՀ Կառավարության սահմանած «Հանրակրթության պետական չափորոշչի» դրույթներով:

ՀՀ կրթության զարգացման մինչև 2030 թվականների պետական ծրագիրը:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թ-ի սեպտեմբերի 30-ի N 35-Ն հրամանի՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման պահանջներով ու ձևաչափով:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից հաստատված ՀՀ ԿԳՄՄՆ «Նոր Հաճնի ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ:

Հաստատության աշակերտների համար ստեղծվելու են բոլոր հնարավորությունները՝ իրականացնելու ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածով երաշխավորված կրթության իրենց իրավունքը:

ՀՀ ԿԳՄՄՆ «Նոր Հաճնի ավագ դպրոցի» զարգացման 2023-2028թթ. ծրագիրը մշակելիս հաշվի են առնվել նաև դպրոցի տնօրենի, տնօրենի տեղակալի և մանկավարժների նախորդ ուսումնական տարիների հաշվետվությունները , հաստատության ձեռքբերումները և դպրոցում առկա հիմնախնդիրները: Հաշվի են առնվել նաև համաձայն ՀՀ կառավարության 2023թ. փետրվարի 9-ի N181- Ն որոշման 16 –րդ կետի համաձայն

հաստատության մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդների առաջարկությունները:

ՀՀ ԿԳՄՄՆ «Նոր Հաճնի ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի զարգացման ծրագրի մշակման համար կատարվել են հետևյալ քայլերը՝

1/ սահմանվել է դպրոցի առաքելությունը,

2/ վերլուծվել է առկա իրավիճակը, բացահայտվել եղած հիմնախնդիրները,

3/ սահմանվել են հիմնական նպատակները և դրանցից բխող խնդիրները,

4/ սահմանվել են հիմնական գերակայությունները, մշակվել կատարման համար անհրաժեշտ գործողությունները և միջոցառումները,

5/ սահմանվել են հիմնական ռազմավարությունները, գնահատվել եղած և անհրաժեշտ մարդկային, նյութական միջոցները,

6/ կատարվել է ռիսկերի գնահատում և դրանց կանխարգելման քայլեր,

7/ ենթադրվել են ծրագրից ակնկալվող արդյունքները:

4.ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Ճշմարիտ գիտությունը, ինչպես ամեն արժեքավոր բան հեշտությամբ չի տրվում: Դրան հասնելու համար հարկավոր է աշխատել, սովորել, մտածել:

Թոմաս Արնոլդ

Նոր Հաճնի ավագ դպրոցը այն վայրն է, որտեղ ձևավորվում են ժամանակակից պահանջներով զինված, ինքնուրույն մտածող, ժամանակին համընթաց քայլող, ստեղծագործող, մարդասեր, կրթված, հայրենասեր անհատներ, որոնք կերտում են ապագայի Հայաստանը՝ ուժեղ, անկախ, մրցունակ և ազգային արժեքների պահպանմամբ:

Յուրաքանչյուր կազմակերպության, այդ թվում Նոր Հաճնի ավագ դպրոցի առաքելությունը ցանկալի ապագայի մտապատկերն է, որը ենթադրում է.

- Դպրոցի հիմնական առաքելությունը եղել և մնում է ժամանակի պահանջներին համապատասխան սերունդ կրթելն ու դաստիարակելը:
- Պետության և ազգի անվտանգության ապահովման հզորացման գործում գերակա խնդիր է ապագայի մարտահրավերներին դիմակայելու և պայքարելու պատրաստ և ունակ մարդու ձևավորումը:
- Ուսումնական, սոցիալ-հոգեբանական, ստեղծագործական այնպիսի միջավայրի ձևավորումը, որը կապահովի յուրաքանչյուր սովորողի ստեղծագործական հմտությունների, քննադատական մտածողության, անհատական ունակությունների զարգացմանը:
- Ազգային գաղափարախոսության կրող և համաշխարհային մշակութային կյանքին ինտեգրված քաղաքացի դաստիարակելը, ով ունակ կլինի դիմագրավելու ժամանակակից մարտահրավերներին և իր ավանդը ներդնելու հայկական մշակույթի զարգացման և համաշխարհային հարթակներում այն ներկայացնելու գործին:
- Տեղեկատվական բարձր տեխնոլոգիաների կիրառումը դարձնել ամենօրյա կրթության մաս: Սովորողներին հնարավորություն տալ սեփական նախաձեռնություններն ու ծրագրերը իրականացնել արդի ժամանակներին համահունչ:
- Սովորողների մասնագիտական կողմնորոշմանը աջակցող և նրանց անձի հնարավորությունների ամբողջական բացահայտմանն ուղղված կրթական միջավայրի ապահովումը:
- Յուրաքանչյուր սովորողի համար այնպիսի բարոյահոգեբանական միջավայրի ստեղծումը, որտեղ սովորողը կարող է դրսևորել իր կարողություններն առավելագույն ձևով:
- Մերօրյա մարտահրավերների համատեքստում առանձնակի կարևորել լեզուների ուսուցումը, որոնց տիրապետումը 21-րդ դարի ստեղծագործող անհատի համար առաջին հերթին հաղորդակցման և մասնագիտական զարգացման ապահովման երաշխիք է:
- Կրթական բոլոր աստիճաններում ապահովել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կրթություն ստանալու հավասար իրավունքը:
- Կարևորելով յուրաքանչյուր սովորողի անհատական կարողություններն ու
- ունակությունները՝ ստեղծել միջավայր, որը հաճելի և սիրելի է սովորողի համար:

- ԿԱՊԿՈՒ և ներառման կարիք ունեցող աշակերտների համար իրենց առանձնահատկություններին համարժեք կրթություն ապահովել, ձևավորել համապատասխան միջավայր:
- Զարգացնել սովորողների իրավագիտակցությունը՝ ապահովելով ինքնակառավարման մարմինների լիակատար և ակտիվ գործունեությունը:
- Սովորողների համար ստեղծագործական կարողությունների զարգացման տարբեր հարթակների ապահովումը դարձնել առաջնահերթություն:
- Կրթության մեջ կարևորել ոչ միայն գիտելիքը, այլ նաև կարողունակությունները, որը այսուհետ պարտադիր է Հանրակրթության պետական չափորոշչով:
- Ժողովրդավարական արժեքների խթանումն ու դաստիարակումը համարել առաջնահերթություն:
- Ազգային հենքի վրա տրվող կրթությունն ու դաստիարակությունը դնել հայրենասիրական դաստիարակության հիմքում:
- Դպրոցը պետք է լինի ջերմ, սիրելի միջավայր, որտեղ սովորողը իրեն զգա ազատ, անկաշկանդ և ապահով:
- Ուսուցիչը պետք է լինի նվիրված, հոգատար, սրտացավ, սիրառատ, հանդուրժողականությամբ և անսպառ գիտելիքներով օժտված:
- Կրթական արդի տեխնոլոգիաների ներդրման, կրթության անհատականացման, ժամանակակից աշխարհի միտումներին համընթաց, ուժեղ թվային, ինժեներական կրթությամբ և մշակույթային արժեքներով, ազգային հենքով կրթական միջավայրի ստեղծում, որում երեխան նախապատրաստվում է կյանքին:
- Գիտակցեն, կրեն և գիտակցելով պահպանեն դարերի խորքից եկած հայի տեսակը և գիտելիքի լույսը կրելով իրենց մեջ, դառնան հուսալի հենարան հայրենիքի համար, ինչն էլ կլինի դպրոցի ներդրումը հայրենիքի հզորացման գործում:

5. ԴՊՐՈՑԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ / ԱՆՁՆԱԳԻՐԸ/

Հաստատության անվանումը՝ ՀՀ ԿԳՄՍՆ «ՆՈՐ ՀԱՃՆԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ
Հաստատության հասցեն- Կոտայքի մարզ , քաղաք Նոր Հաճըն,Տոռոզյան 13։

Հաստատության հեռ. 0224 4 30 46 , էլ. հասցե՝ norhajen2@schools.am։

Նոր Հաճնի ավագ դպրոցը հիմնադրվել է 1959 թվականին։ Ըստ ՀՀ անշարժ գույքի սեփականության վկայագրի N 12052021-07-0151/ Տոռոզյան13/՝ ուսումնական հաստատությունն ունի 0,234 հա տարածք, որից 1943,1քմ մակերեսը ուսումնական հաստատության շենքն է, ինչպես նաև ըստ ՀՀ անշարժ գույքի սեփականության վկայագրի N 22042013-07-0039-ի /Տոռոզյան11/7/, 23,29քմ կաթսայատուն է։ Դպրոցի ողջ տարածքը օգտագործվում է ուսումնական գործընթացի կազմակերպման համար։ Դպրոցն աշխատում է 5-օրյա աշխատանքային ռեժիմով, միահերթ, ունի լոկալ ջեռուցում, ունեցել է հաստատված համադպրոցական տարեկան ուսումնադաստիարակչական աշխատանքային պլան, որի հիման վրա դպրոցի մյուս օղակները պլանավորել են իրենց աշխատանքները։

Դպրոցի շրջանավարտները հայտնի են հանրապետությունում որպես լավագույն մանկավարժներ, անվանի բժիշկներ, նկարիչներ, երաժիշտներ, գիտաշխատողներ, դասախոսներ, զինծառայողներ, իրավապահ և բարձրաստիճան մարմիններում աշխատող պաշտոնյաներ և այլն:

14.01.2003 թվականին գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետռեգիստրի Նաիրիի տարածքային բաժնում և փոփոխման է ենթարկվել 18.12.2020 թ.ին

Գրանցում № 80.210.00795

Վկայական № 03 Ա 058038:

Դպրոցի կանոնադրությունը հաստատվել է ՀՀ ԿԳՄՄՆ-ի կողմից՝ 15.09,2017թ.-ին և վերջին անգամ փոփոխության ենթարկվել 26.02.2020թ.-ին: Համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի 23.07.2010 թվականի N0223Ա հրամանով դպրոցին տրվել է կրթական լիցենզիա՝ միջնակարգ ընդհանուր կրթություն իրականացնել թվով 300 աշակերտի համար, որը վերաձևակերպվել է 27.05.2021 թ. N 853-Ա/2 հրամանով /ՀՀ ԿԳՄՄՆ Նոր Հաճնի ավագ դպրոց ՊՈԱԿ/: Դպրոցն ունի կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ: Ունի ինքնուրույն հաշվեկշիռ և գանձապետական հաշիվ, ինչպես նաև դպրոցական կայք և ֆեսբուքյան էջ:

Կից աղյուսակներում ներկայացված է դպրոցի շենքային պայմանները, գույքը և սարքավորումները, ինչպես նաև դասարանների քանակը, մակավարժական համակազմը և այլն: Կցված են նաև նկարներ՝ շենքային պայմանները ներկայացնելու համար:

Շենքային պայմաններ	Քանակը	Ընդհանուր մակերեսը /մ²/	Փաստացի վիճակը
Դասասենյակ	*15*	*716.2*	*բավարար*
Լաբորատորիա	*4*	*180*	*գերազանց*
Գրադարան	*1*	*47.4*	*գերազանց*
Դահլիճ	*1*	*99.6*	*բավարար*
Համակարգչային սենյակ	*2*	*57.4*	*բավարար*
Ուսուցչանոց	*1*	*31.2*	*լավ*
Առանձնասենյակ	*8*	*149.8*	*բավարար*
Համակարգչային սենյակ	*1*	*52.0*	*բավարար*
Պահեստային սենյակ	*2*	*39.4*	*բավարար*
Սանհանգույցներ	*3*	*35.5*	*բավարար*

Գույք ,սարքավորումներ	Քանակը	Վիճակը	Պահանջարկը
Աշակերտական սեղան	*344*	*լավ*	-
Աշակերտական աթոռ	*496*	*լավ*	-
Աշակերտական նստարան	*67*	*լավ*	-
Գրատախտակ	*35*	*լավ*	-
Ուսուցչական սեղան	*31*	*լավ*	-
Ուսուցչական և դահլիճի աթոռներ	*158*	*լավ*	-
Պահարան	*80*	*լավ*	-
Համակարգիչ ուսումնական	*32*	*25 լավ, 7 անսարք*	*5*
Համակարգիչ աշխատանքնային	*2*	*լավ*	*1*
Համակարգչային սեղան	*26*	*լավ*	-
Համակարգչային աթոռ	*13*	*լավ*	-
Հեռուստացույց	*2*	*լավ*	-
Լուսանկարչական ապարատ	*1*	*վատ*	-
Պրոյեկտոր	*2*	*1լավ, 1 բավ.*	*1*
Նոթբուք	*22*	*բավարար*	
Տպիչ սարքեր	*5*	*2լավ, 3վատ*	3
4 բնագիտական առարկաների լաբորատոր գույք և սարքավորումներ	*4 կաբինետի*	*գերազանց*	-
Ինտերակտիվ գրատախտակ	*2*	*1լավ, 1 անսարք*	*1*

ԴՊՐՈՑԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԹԻՎԸ՝ ԸՍՏ ՏԱՐԵԹՎԵՐԻ



ԴՊՐՈՑՆ ՈՒՆԻ 4 ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՄԱՄՆԱԽՄԲԵՐ.



Դպրոցի զարգացման ծրագրում իրատեսական նպատակներ և խնդիրներ սահմանելու համար կատարվել է առկա իրավիճակի վերլուծություն, բացահայտվել են դպրոցի ուժեղ և թույլ կողմերը, վեր են հանվել առկա հիմնախնդիրները: Հանդիպումներ եմ ունեցել դպրոցի աշակերտական, ծնողական և մանկավարժական խորհուրդների հետ, որոնց դիտարկումները, առաջարկությունները, կարծիքները արտացոլել եմ դպրոցի զարգացման ծրագրում:

6. ԴՊՐՈՑԻ ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Մարդկային ռեսուրսներ

№	01.01.2023թ. դրությամբ		
1	Ուսուցիչների ընդհանուր թիվը	21	19 կանայք
	Վարչական աշխատողներ	2	1 կին
2	Սովորողների թիվը	210	
3	Բարձրագույն կրթությամբ ուսուցիչներ	21	19 կանայք
4	Տարակարգ ունեցող ուսուցիչներ	0	
5	Կամավոր ատեստավորված ուսուցիչներ	2	2 կին
6	Համատեղությամբ աշխ. ուսուցիչներ	3	2 կին
7	Ուսուցիչ/սովորող փոխհարաբերությունը	210/21= 10 աշ.	
8	Ուսուցիչների միջին շաբաթ. ծանրաբեռնվածություն	≈18,86 ժամ	
9	Առարկայական մեթոդ միավորումներ	4	
10	Ուսումնաօժանդակ անձնակազմ՝	14	
11	Աշակերտ հարաբերակց. /սպասարկող անձնակազմ	15	
12	Հաշվապահ	1	
13	Օպերատոր	1	
14	Գործավար	1	
15	Գրադարանավար	1	
16	Լաբորանտ	1	

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԸ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔՆԵՐԻ ԹԻՎԸ
Տնօրեն	1
Տնօրենի տեղակալ ուսումնական աշխատանքների գծով	1
Դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ	1
Քաղպաշտպանություն և զինղեկ	1.5
Ուսուցիչներ	21

ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԱՆՁՆԱԿԱԶՄ/ հաստիք/

Հաշվապահ	1
Գրադարանավար	1
Օպերատոր	1
Գործավար	1
Լաբորանտ	1

ՍՊԱՍԱՐԿՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ

Հավաքարար	3
Պահակ	3
Տնտեսվար	1
Հնոցապան /սեզոնային/	1.5

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԿԱԶՄԸ



7. ՆՊԱՏԱԿՆԵՐՆ՝ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ

N	ոլորտ	նպատակ
1	Աշխատակազմ (կադրեր)	Մանկավարժական համակազմի որակական բարելավում: Կամավոր ատեստավորում և տարակարգ ունեցող ուսուցիչների թվի ավելացում: Տարաբնույթ վերապատրաստումների, մանկավարժական հմտությունների զարգացմանն ուղղված աշխատանքների ապահովում:
2	Սովորողներ (ուսումնական գործընթաց)	Սովորողների կրթական կառուցվածքի բովանդակային վերազինում : Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության ապահովում՝ պահպանելով փոփոխություններն ու նորարարությունները: Ապահովել սովորողների մասնագիտական կողմնորոշմանն ուղղված աշխատանքները:

3	Ուսումնական միջավայր	Ժամանակակից կրթական պահանջներին բավարարող ուսումնական միջավայրի (ֆիզիկական միջավայր , նյութատեխնիկական բազա) ապահովում:
4	Խորհուրդներ	Կառավարման և խորհրդակցական մարմինների դերի բարձրացում: Ակտիվացնել կառավարման և խորհրդակցական մարմինների ներգրավվածությունը համադպրոցական բոլոր նախաձեռնություններում և աշխատանքներում:
5	Համագործակցություն	Սովորողների սոցիալականացման ապահովում: Համագործակցություն համայնքի և հիմնական դպրոցների հետ: Համագործակցություն ԲՈՒՀ- երի հետ: Համագործակցություն տարբեր մասնագիտությունների մարդկանց, հասարակական կազմակերպությունների հետ:
6	Ներդպրոցական վերահսկողություն	Ունենալ դպրոցում ուսումնադաստիարակչական գործընթացի վիճակի մասին ամբողջական և համակողմանի տեղեկատվություն : Ապահովել յուրաքանչյուր տարվա համար ՆԴՎ-ի կազմումը՝ ժամանակացույցին, բովանդակությանն ու կատարողներին համապատասխան:

8. ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

Դպրոցի ուսումնադաստիարակչական գործունեության կենտրոնական դեմքն ուսուցիչն է, իսկ կրթակարգի ներդրման հաջողության հիմնարար գործոնը՝ ուսուցիչների մասնագիտական կատարելագործման արդյունավետ իրականացումը: Այսօր մեր հանրապետությունը թևակոխել է կրության բովանդակային բարեփոխումների նոր փուլ: Փոփոխվել է նաև Հանրակրթության պետական չափորոշիչը /ՀՊՉ/, որը հիմնված է սովորողների հմտությունների կարողունակությունների վրա: Կրթական քաղաքականությունը մեծացնում է ուսուցիչների պատասխանատվությունը: Մերօրյա ուսուցիչը իր գիտելիքները, վարպետությունը և կարողունակությունները հարստացնելու խնդիրներ ունի, որպեսզի կարողանա գործունեության ընթացքում հավասարապես շեշտադրել սովորողների գիտելիքը, հմտությունը,

դիրքորոշումը և արժեքային համակարգը:

Իրավիճակի վերլուծություն	
ուժեղ կողմ	թույլ կողմ
1.Դպրոցի տնօրինությունն ունի դպրոցի ղեկավարման և կառավարման անհրաժեշտ պատրաստվածություն, տիրապետում է դպրոցի ուսումնադաստիարակչական, ֆինանսատնտեսական և կառավարման ոլորտների ղեկավարման առանձնահատկություններին: 2.Դպրոցի գործունեությունը բաց է ու թափանցիկ, աշխատանքի արդյունքները տեսանելի են բոլորին: 3.Դպրոցը ուսումնադաստիարակչական հարցերում փորձում է ապահովել աշակերտակենտրոն մոտեցում: 4.Մանկավարժական և ուսուցչական անձնակազմերը ունեն համապատասխան բարձրագույն մանկավարժական որակավորում, համագործակցում են միմյանց հետ, փորձի փոխանակման համար իրականացնում են փոխադարձ դասալսումներ : Ուսուցիչներից երկուսը հաղթահարել են կամավոր ատեստավորման 50% և 40 % արդյունքները: 5.Հաճախակի են կազմակերպում բաց դասեր՝ բազմազան մեթոդների , ՏՀՏ-ների կիրառմամբ, լաբորատոր և գործնական աշխատանքների միջոցով : 6. Դպրոցը հագեցած է բնագիտական բոլոր առանկաների լաբորատորիաներով, համակարգչային կենտրոններով, ինչը ավելի բովանդակալից, հագեցած ու հետաքրքիր է դարձնում ԲՏՃՄ ոլորտի դասերը: 7. Ուսուցչական համակազմն ունի երկարամյա փորձ, մասնագիտական ու մեթոդական բարձր կարողություններ ու հմտություններ, դասերի կազմակերպման ընթացքում կիրառում են մեր գերհագեցած լաբորատորիաները, տարաբնույթ դիդակտիկ պարագաներ, համակարգչային և սմարթ կենտրոնները և այլն: Հաճախակի կազմակերպում են քննարկումներ, փորձի փոխանակման դասեր և մեթոդական զեկուցումներ: 8. Տնօրենը և ուսուցիչներն ակտիվ մասնակցում են ԿԶՆԱԿ հիմնադրամի կողմից կազմակերպվող և անցկացվող բոլոր սեմինարներին և վերապատրաստումներին: 9. Դպրոցը մենթոր-դպրոց է և բոլոր նորարարությունները, չափորոշչային փոփոխությունները նախ ընկալում և փորձարկում է ինքնուրույն, ապա օգնում է նաև մենթի դպրոցներին, նրանց տնօրեններին և ուսուցիչներին:	1. Ուսուցիչները դեռևս չեն տիրապետում նոր ՀՊՉ- ին և նրանից բխող ծրագրային ու մեթոդական փոփոխություններին: 1.Ուսուցիչները ցանկություն չունեն տարրակարգ ստանալու, խուսափում են մասնակցել կամավոր ատեստավորմանը և ԿԳՄՍ նախարարության կողմից կազմակերպվող «Տարվա լավագույններ» մրցույթին: 2. Ուսուցիչների մեծ մասը /հատկապես ոչ դասղեկները/ ցանկություն չունեն մասնակցելու արտադպրոցական ու արտադասարանային աշխատանքներին: 3. Դեռևս կան ուսուցիչներ, հատկապես ոչ երիտասարդ, որ թերանում են ՏՀՏ- ների կրիառմամբ դասապատրաստումներից: 4. 2019թ-ից ի վեր դպրոցում ԿԱՊԿՈՒ սովորողներ չունենք, սակայն լինելու դեպքում ուսուցիչները կունենան դժվարություններ, այս սովորողների հետ աշխատելիս:

ՆՊԱՏԱԿ 1

Մանկավարժական համակազմի որակական բարելավում

Խնդիրներ

Ուսուցիչների ինքնազարգացմանն ուղղված աշխատանքների կազմակերպում

Առարկայական մասնախմբերի կողմից ստեղծել առարկայական ռեսուրս կենտրոններ

Ապահովել բոլոր ուսուցիրների համակարգչային գրագիտությունը և դասապրոցեսում ՏՀՏ-ների նհոառման նառոոոութունո

Գործողություններ

1.Հանձնարարել մասնախմբերի ղեկավարներին հարցը քննարկել մ/մ նիստերում:
2.Համատեղ կազմել ինքնազարգացման պլանի օրինակելի նմուշ:
3.Կազմել հաշվետու- ձևանմուշ:
4.Մասնախմբերի կողմից կազմել ժամանակացույց ինքնազարգացման աշխատանքների արդյունքում հետքրքրաշարժ թեմաները, ստեղծագործական աշխատաքնները ներկայացնելու համար:
5.Աջակցել մանկավարժներին մշակելու տպագրության ներկայացնելու իրենց մեթոդական աշխատանքներին վերաբերվող նյութերը:
6. Աջակցել <<Տարվա լավագույններ>> մրցույթին մասնակցելու համար:

1. Կազմել ինքնազարգացման աշխատանքի արդյունքում դուրս բերված հետաքրքրաշարժ, կարևոր թեմաների ցանկը:
2. Նյութերով համալրել ռեսուրս-կենտրոնը(օժանդակ գրականություն, մեթոդական ամսագրեր , էլեկտրոնային կրթական նյութեր, առարկայական ծրագրերի CD-ներ,դիդակտիկ պարագաներ, պաստառներ):
3. Նյութերը համապատասխանաբար օգտագործել դասապրոցեսներում:
4. Մասնախմբերի կողմից նյութերը համադրել, միջառարկայական կապը ապահովվող նյութերով համալրել դպրոցի ռեսուրս բազան :

1.Ուսումնասիրել ուսուցիչների կողմից ՏՀՏ կիրառումը դասապրոցեսի ընթացքում:
2.Իրականացնել դասալսումներ, դիտարկումներ, և քննարկումներ:
3.Ըստ կարողությունների և հմտությունների կազմել ՏՀՏ գիտելիքները խորացնելու աշխատանքի պլանավորում:
4.Կազմել համապատասխան խմբեր ու աշխատանքային ժամանակացույց:
5.Իրականացնել դասընթացը:
6.Արդյունքում ստեղծված նյութերով հարստացնել ռեսուրս-կենտրոնը:

9. ՍՈՎՈՐՈՂՆԵՐ

Ուսման գործընթացում ամենօրյա զարգացումը անհրաժեշտ է և անխուսափելի, քանզի մեր ապագա քաղաքացին պետք է կրթվի ու դաստիարակվի գիտելիքների և կրթական ծրագրերի ժամանակակից մակարդակին համապատասխան:

Իրավիճակի վերլուծություն	
ուժեղ կողմ	**թույլ կողմ**
1.Տարեկան առաջադիմությունը 97-100% է: 2.Նվազել է բացակայությունների թիվը և անհարգելի բացականեր գրեթե չկան : 3.Դպրոցում կան օժտված և շնորհալի սովորողներ, որոնք ակտիվ մասնակցում են մարզամշակութային միջոցառումներին, առարկայական օլիմպիադաներին, ԿԳՄՄՆ և ԿԶՆԱԿ հիմնադրամի կողմից կազմակերպված տարբեր նախագծերին և ունեն գրանցված հաջողություններ: 4. Գրեթե բոլոր սովորողները տիրապետում են ՏՀՏ -ներին: 5.Դպրոցի բոլոր սովորողները ապահովված են դասագրքերով , գրենական պիտույքներով : 6.Դպրոցում հաճախակի կազմակերպվում են առարկայական, գրական- երաժշտական, հայրենասիրական և դաստիարակչական տարաբնույթ միջոցառումներ: 7.Կազմակերպվում են հանդիպումներ տարբեր բուհերի ներկայացուցիչների, տարբեր մասնագիտություններ ունեցող մարդկանց հետ, այցելություններ բուհեր, գործարաններ և այլն՝ սովորողներին մասնագիտական կողմնորոշում տալու նպատակով: 8. Յուրաքանչյուր ուսումնական տարի բուհ ընդունվում են շրջանավարտների 95%-ը: 9.Բավականին ակտիվ, նախաձեռնող ու կազմակերպված գործունեություն է ծավալում աշակերտական խորհուրդը: 10. Ուսումնադաստիարակչական պլանով նախատեսված՝ ակտիվորեն կազմակերպվում են նպատակային և ուսուցողական էքսկուրսիաներ /թատրոն, համերգ, օպերա, բալետ, պատմամշակութային վայրեր, հայրենաճանաչողական էքսկուրսիաներ և թանգարաններ/: 11. Ավելանում է հետաքրքրությունն ու մասնակցությունը<<Կորիզ>>, <<Գիտսերունդ>>, <<Պատանի ֆիզիկոս>> և այլ մրցաշարերին ու ծրագրերին: 12. Մեծ թվով սովորողներ հաճախում են «Թումո» կենտրոն և համակարգչային գրագիտությունը բարելավող այլ կենտրոններ: 13. Այս տարի ունենք մեկ մեդալի թեկնածու:	1.2010թ- ից դպրոցը չունի մեդալակիր: 2.Գերազանց առաջադիմությամբ սովորողների թիվը յուրաքանչյուր տարի պակասում է: Այս ուսումնական տարում կազմում է սովորողների 10% -ը: 3.Գերազանց սովորող աղջիկների թիվը գերազանցում է տղաներին: 4.Սովորողների բնագիտական առարկաների նկատմամբ վերաբերմունքը ավելի ցածր է: 5.Պակասել է մասնակցությունը <<Կենգուրու>>, <<Մեղու>> և այլ մրցաշարերին: 6.Որոշ աշակերտներ դուրս են մնում ծնողների վերահսկողությունից, որը բերում է ուսման նկատմամբ անտարբերության : 7. Կա ընթերցանության պակաս, իսկ ավագ դպրոցում՝ ընդհանրապես նվազում է հետաքրքրությունը գրքի նկատմամբ: 8.Բնագիտական առարկաների, ինֆորմատիկայի օլիմպիադաների արդյունքները գոհացնող չեն:

ՆՊԱՏԱԿ 2

Սովորողների կրթական կառուցվածքի և բովանդակության վերազինում

Խնդիրներ

1.Ուսուցման և զարգացման ապահովումը կրթական ծրագրերի շրջանակում (կարողունակությունների զարգացում):

2.Սովորողների ուսուցման և դաստիարակության իրավունքի իրացումը հանրակրթական պետական չափորոշչին համապատասխան :

3. Նորարարական ծրագրերի իրականացում, մեթոդական և դիդակտիկ նյութերի ապահովում:

Գործողություններ

1.Սովորողներին ծանոթացնել քննադատական մտածողության և ճանաչողական մեթոդներին ու ձևավորել դրանք գործնականում կիրառելու կարողություններ և հմտություններ:
2.Սովորողների մոտ զարգացնել.
ա. լեզվական կարողունակություն և գրագիտություն
բ. սովորել սովորելու կարողունակություն
գ. ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն
դ. ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն
ե. թվային և մեդիա կարողունակություն
զ. մշակութային կարողունակություն
է. մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակություն
ը. տնտեսական կարողունակություն:

ՈՒսուցման գործընթացին զուգահեռ ապահովել՝

1.հայրենասիրական

2.մարդասիրական

3.քրիստոնեական

4.ֆիզիկական

5.գեղագիտական

6.մշակութային

7.աշխատանքայի

8.սեռային դաստիարակությունը:

1. Անհատական ուսուցման կազմակերպում և վերահսկում:
2. Նոր մեթոդների նպատակային կիրառում:
3. Դասապրոցեսներին ներդնել և օգտագործել առարկայական էլեկտրոնային դասեր (ԿԳՄՄՆ-ի էլեկտրոնային կրթական նյութեր՝ պաշարների շտեմարան էջից):
4. Անհրաժեշտության դեպքում կազմակերպել հեռավար ուսուցում :
5. Լաբորատոր աշխատանքների կիրառման միջոցով ավելացնել գրավչությունը բնագիտական առարկաների նկատմաբ:
6. Ժամանակակից ստանդարտներին համապատասխան ընթերցասրահի կահավորման և ծրագրային գրքերով: ապահովման միջոցով հետաքրքրություն առաջացնել ընթերցանության նկատմամբ:

10.ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ

Կրթության կարևորագույն բաղադրիչներից մեկը ուսումնական միջավայրն է ,որը նպաստում է կրթության որակի բարձրացմանը, սովորողի առողջության պահպանմանը, ֆիզիկական զարգացմանը:

Իրավիճակի	Վերլուծություն
ուժեղ կողմ	թույլ կողմ
1.Դպրոցի շենքը քարե, տիպային կառույց է՝ բաղկացած երկհարկանի մասնաշենքից: 2.Դպրոցի տարածքը ասֆալտապատ է: 3.Դպրոցն ունի շուրջօրյա ջրամատակարարում , լոկալ ջեռուցում: 4.Դպրոցի կից տարածքում կա մարզահրապարակ և ֆուտբոլի դաշտ: 5.Առկա են 2 համակարգչային և 1 սմարթ կաբինետներ՝ հագեցած պրոյեկտորներով, 10 համակարգիչներով, 22 նոթբուքերով, անվճար ինտերնետ կապով ,վայֆայով: 6.Դպրոցն ունի բնագիտական առարկաների / ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, աշխարհագրություն/ վերանորոգված և գերհագեցած լաբորատորիաներ: 7.Պարբերաբար ձեռք են բերվում մարզագույք՝ ֆիզկուլտուրայի դասերն անցկացնելու համար: 8.ՈՒսումնական պարապմունքներն անցկացնելու համար առկան են առարկայական պասատառներ, դիդակտիկ նյութեր և այլն: 9.Առկա է տեխնիկական սարքավորումների անհրաժեշտ քանակ /համակարգիչներ, պատճենահանող սարքեր և այլն/ : 10.Գրադարանը ապահովված է դասագրքերով, գեղարվեստական, մեթոդական և ծրագրային գրականությամբ: 11.Վերանորոգվել և կահավորվել են Քառօրյա և 44-օրյա պատերազմներում զոհված մեր շրջանավարտների անվամբ անվանակոչված դասասենյակները, դպրոցամերձ այգում տնկվել են անվանական եղևնիներ: 12.Այս տարի / բացի 3-դասասենյակից/ ապամոնտաժվել և փոխվել են դասասենյակների դռները: 13.Առկա են 3 սանհանգույցներ, սակայն որոշակի նորոգման կարիք ունեն: 14.Դպրոցը չունի մարզադահլիճ, սակայն երկկողմանի պայմանագրով 2023թ-ի սեպտեմբերից համայնքային հիմնանորոգված մարզադահլիճը անհատույց տրամադրվելու է օգտագործման 2 հարակից դպրոցներին: 15. Վերակառուցվել է հանդիսությունների դահլիճի բեմը, սակայն դահլիճը ունի վերանորոգման կարիք: 16. Դպրոցն ունի վերանորոգված և համապատասխանաբար կահավորված պարի խմբակի դասասենյակ: 17. Դպրոցն ապահովված է գույքով:	1.Դպրոցն իր գոյության 60 տարիների ընթացքում գրեթե չի վերանորոգվել և ունի խիստ վերանորոգման կարիք : 2.Վտանգավոր քանդված վիճակում են դպրոցի միջհարկային աստիճանները: 3.Դպրոցը չունի ապաստարաններ և չկա համապատասխան տարածք դրանց ձևավորման համար: 4.Տանիքը նույնպես ունի վերանորոգման կարիք: 5.Սանհանգույցներն ունեն վերանորոգման կարիք: 6.Դպրոցի մուտքի եվրոդռները պետք է ապամոնտաժվեն և փոխվեն: 7.ԿԱՊԿՈՒ երեխաների համար չկան կառուցված թեքահարթակներ, շենքի ներսում և սանհանգույցներում չկան անհրաժեշտ հարմարեցումներ: 8.Վերանորոգման և կահավորման կարիք ունի հանդիսությունների դահլիճը: 9.Պետք է եվրոպատուհաններ տեղադրվեն դպրոցի ձախակողմյան հատվածում: 10.Համակարգիչների և պրոյեկտորների մի մասը ֆիզիկապես մաշված են: 11.Գրադարանին անհրաժեշտ է ծրագրային գեղարվեստական և մասնագիտական գրականություն: 12.Լաբորատորիաները պարբերաբար պետք է համալրվեն անհրաժեշտ նյութերով: 13.Անհրաժեշտ է վերանորոգել և կահավորել «Ավտոգործ» առարկայի կաբինետը:

ՆՊԱՏԱԿ 3

Ժամանակակից կրթական պահանջներին բավարարող ուսումնական միջավայրի (ֆիզիկական միջավայր և նյուտեխնիկական բազա) ապահովումը:

ԽՆԴԻՐՆԵՐ

1.Բարեկարգ ֆիզիկական միջավայրի ապահովում :

1.Դպրոցի շենքի վերանորոգման աշխատանքները կազմակերպելիս առաջանահերթությունը տալ դասասենյակների հատակի և հանդիսությունների դահլիճի վերանորոգմանը: Կառուցել թեքահարթակ:
2.Մարզադահլիճը կահավորել անհրաժեշտ գույքով :
3.Փորձել ստեղծել կամավոր ներդրողների միություն (համայնքից,ծնողներից, շրջանավարտներից) մարզադահլիճի ջեռուցման խնդիրները լուծելու համար:
4.Կազմակերպել սանիտարական օրեր, համագործակցել տարածքի թաղամասային բժշկի հետ , առանձին թեմաների շուրջ կազմակերպել զրույցներ, սեմինար -պարապմունքներ :
5.Կազմակերպել դպրոցում աշակերտների սննդի հարցը:
6.Բուժկետում ստեղծել բոլոր անհրաժեշտ պայմանները առաջին բուժօգնություն ցուցաբերելու համար:

2.Ստեղծել բարենպաստ պայմաններ առողջության պահպանման և ֆիզիկական զարգացման համար:

Գործողություններ

1.Հետևողական լինել դպրոցը պետական ծրագրով վերանորոգվող դպրոցների շարքում ընդգրկելու գործին :
2.Խնդիրը ներկայացնել լիազոր մարմին :
3. Հնարավորության դեպքում առաջնահերթ բարեկարգել առավել անմխիթար տարածքները /օրինակ՝ դասասենյակների հատակները, աստիճանները, սանհանգույցները և այլն/ :
4 Հետևել լուսավորության ապահովմանը (էլեկտրական լարերը գտնվում են անմխիթար վիճակում):
5.Նորոգել և ձեռք բերել նոր համակարգիչներ, պրոյեկտորներ:
6. Դպրոցում ստեղծել կանաչ անկյուն:
7.Ապահովել օդափոխությունը, մաքրությունը:
8.Ստեղծել ԿԱՊԿՈՒ աշակերտների համար անհրաժեշտ պայմաններ :
9.Դպրոցամերձ այգին բարեկարգել և կանաչապատել սովորողների և ծնողների աջակցությամբ:

3.Դպրոցի կրթական պահանջներին համապատասխան ունենալ առարկայական կաբինետներ:

1.Հիմնանորոգման ժամանակ հետևել կաբինետային սենյակների հարմարեցմանը դպրոցի կրթական պահանջներին:
2.Համակարգչային սենյակը վերազինել նոր համակարգիչներով և պրոյեկտորներով, իսկ լաբորատորիաները՝ նյութերով :
3 .Բարեկարգել ռազմագիտության կաբինետը, ստեղծել ուսումնական զենքի համար նախատեսված սենյակ:
4.Գրադարանը պարբերաբար համալրել անհրաժեշտ գրականությամբ :
5. Կահավորել «Ավտոգործ» առարկայի կաբինետը:

11.ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ԵՎ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Դպրոցի զարգացման նպատակներից է՝ կառավարման որակի բարձրացումը, որը կիրականացավի բոլոր շահառու մարմինների համագործակցության արդյունքում: Այդ համագործակցությունը դպրոցի կառավարումը կդարձնի առավել մասնակցային, թափանցիկ և արդյունավետ : Դրա համար անհրաժեշտ է ակտիվացնել նրանց գործունեությունը և բարձրացնել նրանց դերն ու հեղինակությունը դպրոցում:

Իրավիճակի	վերլուծություն
ուժեղ կողմ	թույլ կողմ
1.Դպրոցում գործում է առանձին կառավարման խորհուրդ՝ 9 անդամից կազմված: 2.Խորհուրդը հաստատության Կանոնադրության համաձայն պատշաճ կատարում է իր աշխատանքները: 3.Դպրոցում մանկավարժների թիվը 23_է, որոնք հանդիսանում են մանկավարժական խորհրդի անդամ: Մանկխորհրդի նիստերը բաց են, դրանք գումարվում են հաստատության Կանոնադրության պահանջների համապատասխան: 4.Հաստատությունում գործում է ծնողական և աշակերտական խորհուրդներ, որոնք ընտրվում են մեկ ուսումնական տարի ժամկետով և գործում են հաստատության Կանոնադրության հիման վրա: Ծնողական և աշակերտական խորհուրդների նիստերը կազմակերպվում են ճիշտ ժամանակին և մասնակցային սկզբունքով: 5.Ծնողխորհուրդը աջակցում է սոցիալապես անապահով աշակերտների ընտանիքներին, սովորողների հանգստի կազմակերպման հարցերում , աջակցում է միջոցառումների կազմակերպմանը: 6.Բավականին ակտիվ է գործում աշակերտական խորհուրդը: Աշակերտական խորհրդի կողմից կազմակերպվող միջոցառումները, բանավեճերը, կլոր սեղանները ու մրցույթները նպաստում են սովորողների ազատ մտածողության դաստիարակչական, ուսման նկատմամբ անձնական պարտավորվածության ձևավորմանը : 7.Դպրոցում գործում է առարկայական 4 մասնախմբեր, որոնք ամիսը մեկ անգամ գումարում են նիստեր և արդյունավետ կազմակերպում ուսումնադաստիարակչական աշխատանքները: 8.Խորհուրդները սրտացավ են դպրոցի խնդիրներին, պատրաստակամ են աջակցել դպրոցին:	1.Խորհրդի կազմը ձևավորելիս ծնողխորհուրդը հաշվի չի առնում իր կողմից առաջադրված անդամի կրթական ցենզը: 2.Դպրոցը չունի հոգաբարձուների և շրջանավարտների խորհուրդներ: 3.Խորհուրդների համագործակցությունը պասիվ է: 4.Առարկայական մասնախմբերը չեն համագործակցում հարևան դպրոցների մ/մ-ների հետ: 5.Ծնողխորհրդը նախաձեռնությունների հարցում պասիվ է : 6.Ոչ բոլոր ծնողներն են լավ կատարում իրենց պարտականությունները: 7.Խորհրդի անդամները հաճախակի չեն այցելում դպրոց: 8.Ծնողական ժողովներում ներկա են գտնվում հիմնականում մայրերը:

ՆՊԱՏԱԿ 4



Գործողություններ

Ընդլայնել դպրոցի խորհրդի լիազորությունները և իրավունքները հետևալ ուղղություններով 1.Խորհրդի անդամների մասնակցությունը դպրոցի կրթական ծրագրերին, միջոցառումներին , մրցույթներին, ներքին գնահատման աշխատանքներին: 2.Նյութատեխնիկական բազայի հարստացման ուղղությամբ որոշումների ընդունում: 3.Կրթության պետական կառավարման լիազորված մարմնին, լիազորված մարմին դպրոցի զարգացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում: 4.Դպրոցի շենքի	Ծնողական խորհրդին ընդգրկել ուսման կարևորագույն գործառույթներում. 1.Ծնողների և մանկվարժական կոլեկտիվի կողմից երեխաների դաստիարակության հարցում միասնական պահանջների ձևավորում : 2.Ծնողների ներգրավվածությունը իրենց երեխաների արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներին: 3.Ծնողների մասնակցությունը սովորողների ուսուցման , դաստիարակության գործընթացին , ուսումնանյութական բազայի հարստացմանը՝	Սովորողների ինքնավարության և ինքնակառավարման նպատակով դպրոցում պետք է ակտիվացնել աշակերտական խորհրդի գործունեությունը. 1.Աջակցել աշակերտական խորհրդին՝ բարձրացնելու դպրոցի և իր կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունները ակտիվ գործունեության վերածելու համար: 2. Աշակերտական խորհրդին տալ լիազորություններ աշակերտի ինքնավարության	Դպրոցում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման , ինչպես նաև զարգացման ծրագրին աջակցելու և համայնքի հետ արդյուանվետ համագործակցությունն ապահովելու համար մեծ դեր ունեն շրջանավարտների և հոգաբարձուների խորհուրդները: 1.Անհրաժեշտ է դպրոցում ստեղծել շրջանավարտների և հոգաբարձուների խորհուրդներ:	1.Շարունակել մանկավարժական խորհրդի աշխատանքերում կիրառել մասնակցային քննարկումների և որոշումների ընդունման սկզբունքները: 2.Ուշադրության կենտրոնում պահել մանկավարժական խորհրդի ընդունած որոշումները ճիշտ և ժամանակին կատարումը: 3.Ուսուցիչների աշխատանքների գնահատման և խրախուսման նոր գործիքների կիրառում:

շինարարության վերաբերյալ պետական լիազորված մարմիններին առաջարկությունների ներկայացում: 5.Բյուջեի ճիշտ պլանավորում, որը կնպաստի դպրոցի ֆինանսական միջոցների առավել նպատակային օգտագործմանը : 6.Միջոցներ ձեռնարկել դպրոցի լրացուցիչ ֆինանսավորման և դրանց արդյունավետ օգտագործման համար: 7.Ապահովել մյուս խորհուրդների հետ սերտ համագործակցություն:	այդ գործում ներգրավելով հովանավորների: 4.Ծնողի և դպրոցի միջև կապերի ամրապնդման համար կազմակերպել հանդիպումներ , սեմինարներ: 5.Կազմակերպել համատեղ (ծնող , աշակերտ, ուսուցչական կոլեկտիվ) միջոցառումներ: 6.Ծնողխորհրդի նիստում հանդես գալ առաջարկություններով , խթանել հետաքրքիր նախաձեռնությունների իրականացմանը: 7.Ծնողների նախաձեռնությունները և մասնակցությունը ուսումնադաստիարակչ ական գործընթացին՝ հրապարակել կայքում, մամուլում: 8.Ծնողխորհրդի կապի ամրապնդում՝ դպրոցի կառավարման խորհրդի և մանկվարժական խորհրդի հետ՝ապահովելով տեղեկատվության կազմակերպումը և տարածումը: 9.Աջակցությունը ծնողական խորհրդի աշխատանքների կազմակերպմանը ՝ հատկապես սովորողների սոցիալ-կենցաղային աշխատանքների համապատասխան բանագավառում:	միջոցով: 3.Աշակերտական խորհրդի գործունեության հիմքում կարևորելով սովորողների պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորումը , շարունակել ակտիվ հասարակական անհատի կրթման , սեփական կարծիքների ազատ արտահայտման ուղղորդման ուղղությամբ կատարվող աշխատանքները: 4.Շարունակել ամենօրյա աշխատանքները, կազմակերպվող միջոցառումները , հանդիպումները, բանավեճերը, կլոր սեղաններն ու մրցույթները , նպատակաուղղել աշակերտի ազատ մտածողության դաստիարակման , ուսման նկատմամբ անձնական պատասխանատվությ ան ձևավորման գործին: 5.Ամրապնդել աշակերտ-ուսուցիչ , աշակերտ-ծնող , աշակերտ-համայնք հարաբերությունները:	2.Խորհրդի կազմում ընդգրկել դպրոցի գործունեությամբ շահագրգիռ անձանց, անհատ ձեռներեցների , տեղական իշխանության ներկայացուցիչների : 3.Նրանց ներգրավել դպրոցի համար ֆինանսական միջոցների հայթայթմանը, նյութատեխնիական բազայի ամրապնդմանը , արտաբյուջետային ֆոնդի ձևավորմանը: 4.Շրջանավարտների խորհորդը պետք է գտնի բարերարներ, ովքեր ներդրումներ և նվիրատվություններ կկատարեն: 5.Գործընթացը պետք է լինի առավել թափանցիկ և մատչելի՝ բարերարի , դպրոցի և տեղական ինքնակառավարման ու պետական մարմինների համար:	4.Առաջավոր փորձի հիման վրա դպրոցի՝ աշխատանքների ակտիվացում: 5.ՈՒսումնական պլանների, ծրագրերի և դասագրքերի համալիր ստեղծման գործընթացին ուսուցիչների ակտիվ մասնակցության ապահովում: 6.Սովորողների գիտելիքների ստուգման ու գնահատման համակարգի առավել արդյունավետ աշխատակարգի մշակման ու կիրառման ներդրում:

12. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Սովորողների հասարակական կյանքին ինտեգրվելու , հասարակական ակտիվություն դրսևորելու հմտությունների զարգացմանը դաստիարակչական գործընթացի բաղկացուցիչ մաս է կազմում, քանզի մեր երկրին անհրաժեշտ են զարգացած ժողովրդավար, ազատ մտածողություն դրսևորող քաղաքացիներ:

<u>Հաղորդակցություն, համագործակցություն</u>

Իրավիճակի	վերլուծություն
ուժեղ կողմ	թույլ կողմ
1.Դասավանդման ընթացքում առարկայական և չափորոշիչային պահանջներից ելնելով աշակերտների միջև ձևավորվում են փոխհամագործակցության կապեր: 2.Դպրոցը ակտիվ համագործակցում է ԿԶՆԱԿ-ի, ԿՏԱԿ-ի, ԳԹԿ-ի, ԱԻՆ-ի, Գիտությունների ակադեմիայի, ԱՅԲ հիմնադրամի, Հայաստանում «Ֆրանսիական համալսարան» հիմնադրամի, ԵՊՀ-ի, ԵՊՄՀ-ի, Եվրոպական համալսարանի և այլ բուհերի հետ, ոստիկանության, բուժամբուլատորիայի, Նոր Հաճնի գործարանների, հիմնական և արվեստի դպրոցների հետ : 3.Դպրոցը շատ ակտիվ համագործակցում է թատրոնների, թանգարանների և այլ մշակութային կենտրոնների հետ: 4.Մերտ համագործակցում ենք Նոր Հաճն խոշորացված համայնքի համայնքապետարանի հետ և ակտիվ մասնակցում համայնքային բոլոր միջոցառումներին ու նախաձեռնություններին: 5.Ապահովում ենք դպրոց-ընտանիք փոխհամագործակցությունը: 6.Լինելով մենթոր-դպրոց ավելի է ակտիվացել համագործակցությունը այլ դպրոցների տնօրենների և ուսուցիչների հետ : 7.Դպրոցը համագործակցում է Նոր Հաճն համայնքի բոլոր դպրոցների հետ: Կազմակերպվում են փոխադարձ այցելություններ, միջոցառումներ, փորձի փոխանակումներ և այլն: 8.Դպրոցը համագործակցում է նաև մայրաքաղաքի և այլ մարզերի դպրոցների հետ: Օրինակ՝ Գյումրու թիվ 1 ավագ դպրոցում մասնակցել ենք «ՍԱՄՆԱ ԾՈՒԵՐ» –ը որպես գոյի բանաձև, Նորավանի միջնակարգ դպրոցում՝ «ԸՆՏԱՆԻՔԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՔ», Վաղարշապատի Մ. Գորկու անվան թիվ 5 ավագ դպրոցում՝ «ԵՐԲ ԲԱՑՈՒՄ ԵՆՔ ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ» աշակերտական հանրապետական համաժողովներին, իսկ էստոնական հանրակրթական ուսումնական հաստատությունում մասնակցել ենք բնագիտական առարկաների օլիմպիադային և այլն: 9. Դպրոցը ակտիվ մասնակցում է նաև ԿԶՆԱԿ հիմնադրամի կողմից կազմակերպված նախագծերին՝ «Իմ կյանքը համայնքում», «Հետազոտենք և բացահայտենք աշխարհը» և այլ ծրագրերին:	1.Լինելով ավագ դպրոց և ընտանիքներում արժևորելով սովորողների տարիքը՝ ընտանիք-դպրոց համագործակցությունը ցանկալի չափով չի իրականացվում: 2.Պասիվություն է ցուցաբերում սովորողների հասարակական կայնքին ինտեգրվելու հարցում:

ՆՊԱՏԱԿ 5

Սովորողների սոցիալականացման ապահովում

Խնդիրներ

1.Համագործակցել տարածքային կառավարման մարմինների և հասարակական կազմակերպությունների հետ:

2.Համագործակցել կրթական հաստատությունների, հանրակրթական դպրոցների հետ:

3.Զնավորել քաղաքացիական հասարակության ակտիվ քաղաքացի:

Գործողություններ

1.Դպրոցի միջոցառումներին հրավիրել մարզային իշխանության անդամների , այդ թվում հասարակական կազմակերպությունների ղեկավարներին:
2.Փոխադարձաբար ակտիվ մասնակցություն ունենալ մարզային և հասարակական կազմակերպությունների միջոցառումներին:
3.Կազմակերպել և անցկացնել հանդիպում -ցերեկույթներ մարզի, քաղաքի նշանավոր մարդկանց՝ արվեստագետների ,արհեստագործ -վարպետների, մշակույթի գործիչների, գործարարների հետ:
4.Կազմակերպել այցելություններ արվեստագետների արհեստանոցներ, ցուցահանդեսներ, գործարաններ:
5.Կազմակերպել այցելություններ մշակութային կենտրոններ:
6.Մշտապես հետևել մարզի նորություններին:

1.Ծանոթանալ մարզում առանձին դպրոցների արտադասարանական գործունեությանը, կազմակերպել համագործակցություն առավել ակտիվ դպրոցների հետ.
1/Աշխատանքային դաստիարակության և մասնագիտական կողմնորոշման նպատակով համագործակցել ավագ դպրոցների, միջին մասնագիտական հաստատությունների և բուհերի հետ:
2/Ռազմահայրենասիրական դաստիարակության և նորագույն տեխնիկայի հետ ծանոթանալու նպատակով համագործակցել ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական և ՀՀ ՊՆ Ա. Խամփերյանցի անվան ռազմական ավիացիոն համալսանրանների հետ:
2.Ազգային և համաշխարհային մշակութային արժեքներին հաղորդակից դարձնելու նպատակով
1/համագործակցել մարզում , քաղաքում գործող արվեստի դպրոցների, գրադարանների հետ
2/կազմակերպել էքսկուրսիաներ Հայաստանի պատմամշակութային վայրեր, այցելություններ թանգարաններ, ցուցասրահներ, թատրոններ և այլն:

Դաստիարակել քաղաքացիական հասարկության արժեքները կրող քաղաքացի , ով օժտված կլինի.

1.Կամավորության, առաջնորդության, մասնակցայնության արժեքներով:

2.Ընդհանուր բարօրության գիտակցությամբ:

13. ՆԵՐԴՊՐՈՑԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Ներդպրոցական վերհսկողությունը ուսուցչի աշխատանքի արդյունքների , դպրոցում ուսումնադասատիարակչական գործընթացի վերլծություն է , այն տալիս է հնարավորություն ամբողջությամբ տեղեկանալու գորընթացին և անհրաժեշտության դեպքում ժամանակին շտկելու թերություններն ու անճշտությունները :

Իրավիճակի	վերլուծություն
ուժեղ կողմ	**թույլ կողմ**
1.Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին մանկավարժական խորհրդի նիստում քննարկվում և կառավարման խորհրդի հաստատմանն է ներակայցվում ներքին կարգապահական կանոնները: 2.Վարչական և մանկավարժական աշխատողները իրենց պաշտոնի նկարագրով ներկայացված գործառույթներին համապասախան կազմում են աշխատանքային պլան և իրականացնում համապասխան ժամանակացույցով : 3.Գործող օղակները (խորհուրդներ, մասնախմբեր) պարբերաբար հրավիրում են նիստեր, ունեն կիսամյակային (տարեկան) աշխատանքային պլան և յուրաքանչյուր կիսամյակի վերջում ներկայացնում են հաշվետվություններ: 4.Բոլոր ուսուցիչները ունեն առարկայական թեմատիկ պլաններ, դասի են ներակայանում օրվա դասի պլանով, կատարում են փոխադարձ դասալսումներ: 5.Մշտապես վերահսկվում են առարկայական մասնախմբերի, դասղեկների աշխատանքները: Տնօրինությունը յուրաքանչյուր տարվա սկզբին անց է կացնում նախնական գիտելիքների ստուգում 10-րդ դասարաններում՝ խորացված առարկաներից, իսկ կիսամյակների ավարտին՝ թեմատիկ գրավոր աշխատանքներ 10-12-րդ դասարաններում: 6.Յուրաքանչյուր տարի պարտադիր իրականացվում է ներքին գնահատում և արդյունքները հրապարակվում են դպրոցի կայք էջում : 7.Դպրոցում պահպանվում են սովորողների, աշխատողների իրավունքները: 8.Քիչ են ուսուցիչների բացակայությունները : 9.Արտառոց դրսևորումներով սիստեմատիկ բացակայող աշակերտներ չկան:	1.Տնօրինության կողմից տրված գրավոր աշխատանքների արդյունքում հիմնականում ցածր առաջադիմություն է ցուցաբերվում մաթեմատիկա և բնագիտական առարկաներից:

ՆՊԱՏԱԿ 6

Ունենալ դպրոցում ուսումնադաստիարակչական վիճակի մասին ամբողջական և համակողմանի տեղեկատվություն:

Խնդիրներ

1.Ուսուցիչների աշխատանքի վերահսկում:

2.Աշակերտների կողմից գիտելիքի յուրացման գործընթացի վերահսկողություն:

3.Դպրոցի բոլոր պլանների կատարման մշտական վերահսկողություն:

Գործողություններ

1.Ծանոթանալ ուսուցչի մասնագիտական պարտականությունները նկարագրող փաստաթղթերին, ուսումնական ծրագրերին:
2.Ուսուցիչների փորձի ուսումնասիրություն:
3.Կատարել մանկավարժական աշխատանքի վերլուծություն, մշտադիտարկում:
4.Վերահսկել մասնակցությունը մեթոդմիավորման աշխատանքներին, համադպրոցական միջոցառումներին:
5.Դասավանդվող առարկայի արդյունքների վերահսկում:
6.Առարկայական ծրագրի կատարողականի պարբերական ստուգում:
7.Վերահսկողության արդյունքում կազմել տեղեկանք , որը կպարունակի վերահսկողության հիմքերը , տեղեկատվության ստացման աղբյուրները , կատարված դասալսումների թիվը, վերահսկողության պլանով տրված հարցերի պատասխանները, հետևություններ և առաջարկություններ:
8.Վերահսկողության արդյունքները քննարկել արտահերթ մանկխորհրդի նիստում:

1.Իրականացնել դասարանական-ընդհանրական վերահսկողություն
2.Ուսումնասիրել
- աշակերտների ընդգրկվածությունը ուսումնական գործընթացում
- ուսման նկատմամբ վերաբերմունքը
- աշակերտների և ուսուցիչների համագործակցությունը
- հոգեբանական մթնոլորտը դասարանում

3.Պարզել
- գիտելիքների մակարդակը,
- հմտությունների ու կարողությունների տիրապետումը
- ինքնուրույն սովորելու կարողությունը

4.Անցկացնել ստուգարք առանձին առարկաներից ձեռք բերված գիտելիքների արդյունքները ամփոփելու նպատակով:
5.Վերահսկողության արդյունքում արձանագրված խնդիրների լուծման համար ձեռնարկել համապատասխան միջոցառումներ :

1.Վերահսկել բոլոր տեսակի պլանների պատշաճ և ժամանակին կատարումը.
- առարկայական մասնախմբերի աշխատանքային պլաններ
- փոխտնօրենների տարեկան աշխատանքային պլաններ
- մանկավարժական աշխտողների աշխատանքային պլաններ
- դասղեկների տարեկան աշխատանքային պլան
- գրադարանավարի տարեկան աշխատանքային պլան
- համադպրոցական միջոցառումների աշխատանքային պլան

2.Հաստատել հերթապահության կարգը և վերահսկել դրա իրականացումը:
3.Իրականացնել վերահսկողություն հաճախումների, դրանց հաշվառման, մատենավարության աշխատանքների նկատմամբ :

14.ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ և ԴՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ցանկացած նախաձեռնություն, միջոցառումների ծրագիր կամ առհասարակ՝ որևէ ծրագրավորված գործընթաց իր կատարման ճանապարհին անխուսափելիորեն ենթարկվում է բազմաթիվ արտաքին և ներքին գործոնների ազդեցության, որոնք կարող են այս կամ այն կերպով խոչընդոտել նախաձեռնությանը: Դպրոցի ղեկավարությունը առանձնահատուկ ուշադրություն է դարձնելու այդ գործոնների՝ դպրոցի գործընթացներում առավելագույնս չեզոքացնելու հնարավորությանը՝ նպատակ հետապնդելով հնարավորինս անշեղորեն կատարել ծրագրված միջոցառումները:

Ռիսկերը ցանկացած նպատակադրման իրականացումը խոչընդոտող հնարավոր անցանկալի գործոններն են: Դպրոցի զարգացման ծրագրում հնարավոր ռիսկերի պլանավորումը կարևոր է՝ առանց ռիսկերի հաշվառման ամենալավ մշակված դպրոցի զարգացման ծրագիրն անգամ դժվար է իրականացնել, քանի որ այն լիովին չի կարող արձանագրել ակնկալվող արդյունքները:

N	Ռիսկերը	Ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները
1	Դպրոցի աշխատակազմի, հատկապես տարիքային շեմը, խանգարում է նրանց մասնագիտական պատրաստվածության մակարդակի բարձրացմանը: Քիչ թվով, բայց դեռ կան ուսուցիչներ, որոնք չեն տիրապետում ՏՀՏ գործիքներին: Ավագ դպրոցում աշխատող մանկավարժների մեծ մասը պարապում են նաև բուհ ընդունվող սովորողների հետ, ինչը նույնպես խոչընդոտներ է առաջացնում ինքնազարգանալու և ինքնակրթվելու համար՝ հատկապես ժամանակային առումով: Մանկավարժական անձնակազմի անդամների զգալի մասի մոտ առկա սոցիալ- տնտեսական խնդիրների և աշխատանքի բնույթից բխող ծանրաբեռնվածության համադրությունը որոշ ուսուցիչների կողմից դպրոցի առաջարկվող բարեփոխումներում ընդգրկվելու թույլ մոտիվացիա է առաջացնում, քանի որ այն պահանջելու է կրկնակի ուժ և եռանդ, որը ,ցավոք, չի ապահովվելու մի քանի անգամ ավելի կամ համարժեք ֆինանսական խրախուսում:	Մանկավարժներին ընդգրկել վերապատրաստման դասընթացներին՝ մասնագիտական և մանկավարժական պատրաստվածության մակարդակը բարձրացնելու նպատակով: Տարբեր միջոցներով խրախուսել նրանց ձեռքբերումներն ու հաջողությունները: Ստեղծել պայմաններ ավելի հաճելի և արդյունավետ դասեր պատրաստելու համար: Կազմակերպել ՏՀՏ դասընթացներ:
2	Դպրոցի շենքային պայմանների բարելավում և նյութատեխնիկական բազայի թարմացում:	ֆինանսական միջոցների ճիշտ պլանավորում:

3	Ծնողական համայնքի կողմից դպրոցի գործունեության մասնակցության պասիվություն:	Կազմակերպել հանդիպումներ, սեմինարներ ծնողների համար, որտեղ կքննարկվեն դպրոցի գործունեության վիճակը, հեռանկարային ծրագրերը, ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման հարցերը:
4	Սովորողների թվի նվազումը, որը կախված կլինի՝ ա) ծնելիության անկումից, բ) արտագաղթի մեծացումից, գ)հիմնական դպրոցներից դեպի քոլեջներ արտահոսքի պատճառով, դ)դպրոցի ներքին խնդիրներով չպայմանավորված այլ գործոններից:	Պարբերաբար կազմակերպել հանդիպումներ հիմնական դպրոցների տնօրենների, սովորողների և ծնողների հետ: Կազմակերպել «Բաց դռների» օրեր, հրավիրել հարակից դպրոցների սովորողներին և ծանոթացնել դպրոցի պայմաններին, հնարավորություններին և ծրագրերին:

15. ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Ակնհայտ է, որ դպրոցի ղեկավարը իր գործունեությունը ծրագրելիս ընդգծի այն սկզբունքներն ու գերակայությունները, որոնք նա պլանավորում է սահմանել և գործածել տարբեր մարմինների, ղեկավարների, անձանց և աշխատակիցների հետ փոխհարաբերություններում: Նման սկզբունքների սահմանումը նրան թույլ կտա լինել հասկանալի և թափանցիկ բոլոր մարմինների հետ հարաբերություններում:

Համապատասխանաբար սույն ծրագրում արտացոլված բոլոր միջոցառումներն իրականացնելիս դպրոցի տնօրենը աշխատակիցների, գործընկերների, աշակերտների, ծնողների, կառավարման խորհրդի և խորհրդակցական մարմինների, կրթության կառավարման լիազորված մարմնի և այլ պետական մարմինների հետ հարաբերություններում անվերապահորեն կդրսևորի հետևյալ հիմնական հատկանիշները և սկզբունքները՝

1.ազնվություն և արդարամտություն

2.պարտաճանաչություն,

3.հարգալից և բարեհամբույր վերաբերմունք,

4. պատասխանատվության բարձր զգացում և հետևողականություն,

5.փոխադարձ վստահություն և փոխադարձ համագործակցության պատրաստակամություն,

6.աշխատանքի կազմակերպման հրապարակայինսկզբունքներ և թափանցիկություն, թիմային աշխատանք,

7.անձնակազմի յուրաքանչյուր անդամի կարևորության ընդգծում,

8.իրավիճակային գործունեության ճկունություն,

9.ՀՀ կրթական ոլորտի բարեփոխմանն ուղղված բավարար ակտիվության դրսևորում և համապատասխան աջակցություն,

10.մասնակցային կառավարում:

16. ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆԻ ԿԱԴՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Կադրերն ու նրանց նկատմամբ վարվող քաղաքականությունը յուրաքանչյուր գործընթացում առանցքային դերակատարություն ունեն: Մենք նույնպես գիտակցում ենք դպրոցի անձնակազմի կառավարման գործընթացների արդյունավետության կարևորությունը, իսկ այդ արդյունավետությունն անմիջականորեն բխում է նաև դպրոցի տնօրենի վարած կադրային քաղաքականությունից: Իհարկե անհրաժեշտ է հստակ գիտակցել, որ անձնակազմի կառավարման գործընթացների արդյունավետությունը չի կարող պայմանավորվել բացառապես դպրոցի տնօրենի վարած քաղաքականությամբ. հատկապես դպրոցի տնօրենի, ուսուցիչների և վարչական այլ աշխատողների վարձատրության չափերի և խրախուսման հստակ մեխանիզմների բացակայության առումով առկա են համընդհանուր խնդիրներ, որոնք թերևս հնարավոր է կարգավորել միայն հանրակրթության ոլորտում համընդհանուր սկզբունքներ սահմանելու և դրանք օրենսդրորեն ամրագրելու միջոցով: Այնուհանդերձ՝ առկա մեխանիզմների շրջանակներում դպրոցի տնօրենի կողմից անհրաժեշտ է հետևողական քայլեր ձեռնարկել անձնակազմի կառավարման գործընթացներն առավել բարելավելու ուղղությամբ, ինչը ենթադրում է հետևյալ ուղղություններով միջոցառումների իրականացում՝

- կադրերի համալրում՝ ելնելով անձնակազմի երիտասարդացման օբյեկտիվ անհրաժեշտությունից,
- մանկավարժական անձնակազմի պարբերական վերապատրաստում,
- սահմանված կարգով մանկավարժական անձնակազմի ատեստավորում,
- մանկավարժների աշխատանքի որակի գնահատման ուսումնասիրությունների իրականացում՝ տարեկան կտրվածքով,
- անձնակազմի գործունեության խրախուսում (պաշտոնական աճ, տարատեսակ պարգևատրումներ, մասնագիտական վերապատրաստումներ, տարակարգի ստացում, կամավոր ատեստավորում, մասնագիտական և կազմակերպական խրախուսում, այդ թվում՝ «Դպրոցի լավագույն ուսուցիչ», «Դպրոցի լավագույն դասղեկ» և այլ անվանակարգերի սահմանում):

- համապատասխան ռեսուրսների առկայության դեպքում ոլորտի լավագույն մասնագետների հետ փորձի փոխանակման և վերապատրաստման միջոցառումների իրականացում:

Թվարկված բոլոր միջոցառումներն էլ շատ կարևոր են, փոխկապակցված և միմյանց լրացնող, և որևէ ուղղությամբ միջոցառումների բացակայությունը կարող է շղթայաբար հարվածել անձնակազմի կառավարման բնագավառում կատարված մնացած միջոցառումների արդյունավետությանը:

17.ԴՊՐՈՑԻ ԱՌՋԵՎ ԾԱՌԱՑԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

Աշակերտների առողջության պահպանում

Աշակերտների առողջության պահպանման նպատակով մեր կողմից առաջ քաշված խնդիրները և նպատակները՝

- դպրոցում ապահովել սանիտարահիգիենիկ անհրաժեշտ պայմաններ (անվտանգ սննդի, լուսային, ջերմային),
- սովորողների մոտ ձևավորել առողջ ապրելակերպի մշակույթ,
- պայքարել ծխելու, վտանգավոր այլ սովորությունների դեմ:

Աշակերտների առողջության պատշաճ պահպանումն ապահովելու ուղղությամբ նախատեսվում է՝

- բացառել անորակ սննդի մուտքը դպրոց,
- մանկական հիվանդությունների կանխարգելման նպատակով համագործակցել համայնքային բժշկական հաստատության հետ,
- ՆԶՊ ուսուցչի, դաստիարակչական աշխատանքների կազմակերպչի և դասղեկների հետ հաճախակի կազմակերպել կանխարգելիչ միջոցառումներ՝ ուղղված դժբախտ պատահարներից պաշտպանվելու երեխաների կարողությունների ձևավորմանը,
- ուսուցիչների և դասղեկների հետ պարբերաբար անցկացնել քննարկումներ դասարանական և տնային աշխատանքներին հատկացված ժամաքանակի ռացիոնալ չափերի ապահովման վերաբերյալ,
- միջոցառումների, զեկույցների, քննարկումների միջոցով պարբերաբար անդրադառնալ դարին բնորոշ խնդրահարույց հիվանդություններին (ՁԻԱՀ, ալկոհոլիզմ, թմրամոլություն, սեռավարակներ) և դրանց վտանգավորությանը,
- պատրաստ լինել մշտապես հատուկ ուշադրության կենտրոնում պահել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների մարմնակրթության և ֆիզիկական դաստիարակության խնդիրները,
- հարստացնել դպրոցի սպորտային բազան,
- ապահովել «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի պահանջը՝ պարտադիր պրոֆիլակտիկ զննության անցկացման մասին :

18.ԴՊՐՈՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ

Դաստիարակությունը հանրակրթության կարևորագույն բաղադրիչներից մեկն է և հենց դպրոցին և ուսուցչին է բաժին ընկնում դաստիարակչական գործընթացի զգալի բաժինը, որի բաղկացուցիչ մասն է կազմում աշխատանքը ծնողների հետ: Դաստիարակչական համակարգի նպատակն է՝

- օգնել սովորողին (հատկապես դեռահասին) առանց սթրեսների հարմարվել «աշխարհում» անընդհատ տեղի ունեցող փոփոխություններին,
- նպատակաուղղել երեխային՝ ազգային և համամարդկային արժեքների համակարգում ձևավորվելու որպես ապագա քաղաքացի,
- զարգացնել սովորողների ճանաչողական ակտիվությունը,
- աշակերտի մոտ ձևավորել հարգալից վերաբերմունք հայոց լեզվի, մշակույթի և ազգային ավանդույթների նկատմամբ՝ դարձնելով նրան այդ արժեքների կայուն կրողը, պահպանողը և փոխանցողը,
- յուրաքանչյուր անհատի մոտ ստեղծել ինքնակատարելագործման ներքին պահանջ,
- խթանել սովորողների արտադասարանական և արտադպրոցական ակտիվությունը,
- ապահովել մասնագիտական կողմնորոշումը:

Վերոնշյալ խնդիրները նպատակ են հետապնդում դպրոցում ստեղծել հնարավորինս միասնական դաստիարակչական միջավայր: Դպրոցի դաստիարակչական միջավայրը ներառում է՝



Դպրոցի դաստիարակչական միջավայրը հիմնված է աշակերտական ինքնավարության ձևավորման և դպրոցի ավանդույթների վրա:

Դպրոցում դաստիարակչական համակարգի կատարելագործման նպատակով անհրաժեշտ է՝

- դաստիարակչական գործընթացներում առաջնորդվել միասնական սկզբունքներով և կանոններով, միասնական մանկավարժական պահանջներով,
- ծնողի և դպրոցի միջև կապերի ամրապնդում,
- ամրապնդել ծնողական և աշակերտական խորհուրդների կապը դպրոցի կառավարման խորհրդի և մանկավարժական խորհրդի հետ՝ ապահովելով տեղեկատվության կազմակերպումն ու տարածումը,
- ծնողներին ակտիվորեն ներգրավել դպրոցի դաստիարակչական գործընթացներում,
- ապահովել, որպեսզի դաստիարակչական աշխատանքները հիմնվեն հստակ նախագծված դասղեկական պլանների վրա,
- մշտապես մոնիթորինգի ենթարկել, վերլուծել դպրոցի դաստիարակչական միջավայրը և բացահայտելով առկա խնդիրներն ու բացթողումները՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ,

- ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ սովորողների միջև, ինչպես նաև սովորողների և ուսուցիչների միջև բավարար համագործակցություն, ինչպես նաև միմյանց հետ հաղորդակցվելու համար դրական միջավայր ստեղծելու ուղղությամբ,
- անհրաժեշտ է համագործակցել հոգեբանամանկավարժական վերապատրաստում իրականացնող մարմինների հետ, որի գործունեության արդյունքում կբարելավվեն և կամրապնդվեն մանկավարժ-ԿԱՊԿՈՒ աշակերտ, աշակերտ-ԿԱՊԿՈՒ աշակերտ փոխհարաբերությունները,
- յուրաքանչյուր աշակերտի նկատմամբ ցուցաբերել անհատական մանկավարժական մոտեցում, ինչպես նաև հատուկ մանկավարժական միջոցառումներ կազմակերպել դժվար դաստիարակվող երեխաների հետ,
- դասղեկական ժամերի և արտադասարանական միջոցառումների միջոցով իրականացնել մարդասիրական, բարոյական, հայրենասիրական, գեղագիտական, աշխատանքային, բնապահպանական և այլ դաստիարակչական ծրագրեր,
- ընդլայնել դասարանների, առանձին սովորողների, այդ թվում՝ ազգային

փոքրամասնությունների պատկանող սովորողների, ներդպրոցական և արտադպրոցական դաստիարակչական բնույթի միջոցառումներին մասնակցելու հնարավորությունները,

- մշտապես կարևորել ինքնադաստիարակությունը, ինքնաքննադատությունը և ինքնաճանաչողությունը.
- աշխատանքները կազմակերպել այնպես, որ սովորողների մոտ արժեհամակարգի առաջնայնությունները ճիշտ ձևավորվեն:

Հայրենասիրական դաստիարակություն

Դպրոցում ստեղծել պետական խորհրդանիշների հանրահռչակման և քաղաքացիական դաստիարակության ծրագիր:

Հանուն ազգային և հոգևոր-մշակութային արժեքների վերարտադրման՝ պետական խորհրդանիշների (Հայաստանի Հանրապետության զինանշան, Հայաստանի Հանրապետության դրոշ, Հայաստանի Հանրապետության օրհներգ), ազգային ինքնության և անկախության բաղկացուցիչների (հայոց լեզու, ընտանիք, Հայաստանյաց առաքելական սուրբ եկեղեցի, Հայաստանի Հանրապետության անկախության մասիրն հռչակագիր, Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, Հայաստանի Հանրապետության Նախագահ, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով, հայոց բանակ, գործադիր և դատական մարմիններ, մայրաքաղաք, ազգային դրամ) բովանդակության նպատակային պահպանումը և տարածումը:

Ազգային պետական խորհրդանիշների հանրահռչակման միջոցով նպաստել հայության ինքնության ամրապնդմաը, սեփական ազգի պատմության ու պետության կայացման գործում մասնակցելու հնարավորության ստեղծմանը:

Պետության և նրա բաղկացուցիչների նկատմամբ դպրոցում հարգանքի և ակնածանքի արմատավորումը, քաղաքացիական վարքի մշակույթի ձևավորումը, հասարակական, պետական շահերի գերակայության հաստատումը անձնական շահի նկատմամբ:

Զարգացման ծրագրի այս հատվածում արտացոլված միջոցառումները նպատակաուղղված են՝

- սովորողների մոտ արմատավորել ազգային ավանդույթների նկատմամբ հարգանքը,

- նպաստելու հոգեպես հարուստ և սոցիալապես ակտիվ կեցվածքով հայ քաղաքացու ձևավորմանը,
- սովորողների կողմից կրճատելու տարբեր օրինախախտումների և նրանց մոտ առկա վնասակար սովորույթների մակարդակը,
- պահպանելու և տարածելու ՀՀ պետական խորհրդանիշերի (զինանշան, դրոշ, օրհներգ) բովանդակությունն ու նշանակությունը,
- բարձրացնելու աշակերտների՝ ազգային շահերի պաշտպանության ձևավորմանը նպատակաուղղված ռազմահայրենասիրական դաստիարակությունը՝ միաժամանակ սերմանելով հանդուրժողական և հարգալից վերաբերմունք այլ ազգերի և կրոնների նկատմամբ,
- նպաստելու հայի ինքնության ամրապնդման գործողությունների իրականացմանը (ազգային երգ ու պար, ազգային խոհանոց, աստմունք, արհեստ և արվեստներ),
- յուրաքանչյուր սովորողի մոտ արմատավորելու սեփական ազգի պատմության ու պետության կայացման գործում իր մասնակցության կարևորությունն ու դրա իրական հնարավորությունը. այդ նպատակով ուղղորդել աշակերտական խորհուրդը՝ դարձնելով վերջինս պետական մտածելակերպի զարգացման դպրոց,
- նպաստելու դպրոցում հայրենասիրական դաստիարակության համակարգի կայացմանը, դրա արդյունավետ գործունեության մշտական կատարելագործմանը:

19. ԸՆՏԱՆԻՔ-ԴՊՐՈՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ

Դաստիարակությունը հաջողությամբ է պսակվում, եթե ընտանիքի հետ տարվող աշխատանքը և երեխայի դաստիարակությունը կատարվում են միաժամանակ և ունենում են միևնույն նպատակներն ու ուղղվածությունը: Այսօր առանց ընտանիքի հետ ձևավորված համագործակցության առկայության հնարավոր չէ արդյունավետ կերպով կազմակերպել սովորողների հետ աշխատանքը:

Ընտանիք-դպրոց համագործակցության բարելավումը նպատակ ունի՝

- էլ ավելի արդյունավետ դարձնել ընտանիք-դպրոց փոխազդեցության համակարգը՝ բարձրացնելով փոխադարձ վստահության մակարդակը,
- բարձրացնել սովորողների ուսուցման արդյունքների համար ծնողների պատասխանատվությունը,

- ծնողներին ավելի ակտիվորեն ներգրավել դպրոցի գործունեության մեջ, աջակցել ծնողական խորհուրդների աշխատանքի կազմակերպմանը:

Այդ նպատակով ճշտել՝

- դպրոց հաճախող այն սովորողների թիվը, որոնք օգտվում են «Փարոս» ծրագրից,
- երկկողմանի ծնողազուրկ սովորողների թիվը,
- միակողմանի ծնողազուրկ սովորողների թիվը,
- պատերազմներում զոհված ծնողներ ունեցող սովորողների թիվը,
- հաշմանդամություն ունեցող սովորողների վերաբերյալ տեղեկությունները,
- հաշմանդամ ծնողներ ունեցող սովորողների թիվը,
- նյութապես անապահով սովորողների կազմը,
- ծնողների խնամքից զրկված սովորողների թիվը,
- միայնակ մոր խնամքի տակ մնացած սովորողների մասին տվյալներ,
- այն սովորողների թիվը, որոնք իրականացնում են վարձու աշխատանք՝ ընտանիքին օգնելու նպատակով,
- սովորողների թիվը, որոնց ծնողները դատապարտված են,
- սովորողների թիվը, որոնց ծնողները գտնվում են արտերկրում:

Ընտանիք-դպրոց համագործակցության բարելավման համար անհրաժեշտ է՝

- դպրոցի և ծնողների համագործակցության բովանդակության մեջ ներառել երեք հիմնական ուղղություններ՝
  - ծնողների հոգեբանամանկավարժական տեղեկացվածության բարձրացում,
  - ուսումնադաստիարակչական գործընթացներին ծնողների մասնակցության ընդլայնում,
  - դպրոցի կառավարման գործընթացներում ծնողների մասնակցության մեծացում:
- հանձնարարել դասղեկներին, որպեսզի վերջիններս անվերապահորեն ծանոթ լինեն սովորողների ընտանիքների հետ, որտեղ փաստացի բացակայում է ընտանեկան դաստիարակությունը, և տեղեկացված լինեն այն սովորողների մասին, որոնց ծնողները միայնակ են, հաշմանդամ կամ զորձազուրկ, զոհվել են կամ որոնց ընտանիքները նյութապես անապահով են և ունեն կյանքի անբավարար պայմաններ,
- կատարելագործել ծնողների հետ աշխատանքի ավանդական դարձած մեխանիզմները և պարբերաբար՝
  - կազմակերպել ծնողական ժողովներ և անհատական զրույցներ,
  - ապահովել առարկայական ուսուցիչների և հոգեբանների կամ այլ համապատասխան մասնագետների կողմից խորհրդատվության տրամադրումը,
  - ապահովել դասարանական և ծնողական խորհուրդների ակտիվ գործունեությունը:
- ծնողների և երեխաների համատեղ մասնակցությամբ պարբերաբար անցկացնել միջոցառումներ,

- ոգևորել և խրախուսել դպրոցի կյանքին ակտիվ մասնակցություն ցուցաբերած ծնողների անհատական նախաձեռնությունները, խրախուսել երեխաների և ծնողների համատեղ ստեղծագործական գործունեությունը,
- դպրոցի ծնողական խորհրդում ներգրավել դպրոցի ամենաակտիվ և փորձառու ծնողներին,
- ամրապնդել ծնողական խորհրդի կապը աշակերտական, մանկավարժական և կառավարման խորհուրդների հետ:

20. ԱՇԽԱՏԱՆՔ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՀԵՏ

Մեծ է մանկավարժի դերը դպրոցում և այն էլ ավելի նշանակալի դարձնելու համար դպրոցում անհրաժեշտ է ձևավորել գիտակցության, միջավայրի և հարաբերությունների այնպիսի մակարդակ, որը թույլ կտա արժևորել լավագույն մանկավարժների աշխատանքը՝ վերջիններիս մշտապես մղելով անձնային և մասնագիտական կատարելագործման:

Մանկավարժական համակազմի հետ աշխատանքի նպատակն է՝

- յուրաքանչյուր մանկավարժի համար դպրոցում ստեղծել հարմարավետ ստեղծագործական միջավայր,
- տարածել առաջավոր մանկավարժական փորձը (մասնախմբերի նիստերում,գործնական պարապմունքների, դասալսումների վերլուծության մանկավարժական գիտաժողովների, կոնֆերանսների և նմանատիպ այլ միջոցառումների ժամանակ),
- բարելավել մանկավարժական անձնակազմի մասնագիտական որակը,
- խրախուսել մանկավարժներին՝ հետազոտական աշխատանքներ կատարելու և սեփական գիտակրթական նյութերը ներկայացնելու համար՝ ապահովելով նրանց մասնագիտական աճը, իսկ առավել արժանիներին օժանդակել տարակարգի ստացման և կամավոր ատեստավորման գործում:

Մանկավարժական համակազմի հետ աշխատանքի կատարելագործման նպատակով անհրաժեշտ է՝

- մանկավարժների համար դպրոցում ստեղծել տեղեկատվության մի համակարգ, որի միջոցով վերջիններս հնարավորություն կունենան մշտապես համալրելու իրենց գիտելիքները առնվազն հետևյալ ուղղություններով՝

- դպրոցի և կրթության նկատմամբ նոր պահանջներ,
- ժամանակակից մանկավարժական նվաճումներ,
- առաջավոր մանկավարժական փորձ,
- հոգեբանություն և մանկավարժություն,
- փոխադարձ դասալսումների կազմակերպման միջոցով ուսուցիչների միջև պարբերաբար կազմակերպել փորձի փոխանակում,
- արդյունավետ կազմակերպել և առավելագույնս օգտագործել կազմակերպված վերապատրաստումների և ատեստավորումների արդյունքները: Այս ուղղությամբ անհրաժեշտ է առհասարակ դպրոցում պարտադիր պայման և ավանդույթ դարձնել ցանկացած ուսուցչի կամ դպրոցի ղեկավարի կողմից վերապատրաստումների, դասընթացների, սեմինարների, հանդիպումների, կոնֆերանսների, ժողովների մասնակցության արդյունքում և/կամ/ ցանկացած այլ միջոցներով ստացված տեղեկատվության էական կամ ընդհանուր բաղադրիչների և սկզբունքների փոխանցումն ամբողջ մանկավարժական անձնակազմին՝ դպրոցում կազմակերպվող սեմինար քննարկումների միջոցով,
- ուսուցիչների հետ աշխատանքում առավել շեշտադրել և ընդգծել վերջիններիս կողմից կիրառվող դասավանդման նոր ձևերն ու մեթոդները,
- անընդհատ իրականացնել ուսուցիչների միջև համագործակցության մթնոլորտի կատարելագործանը նպաստող գործողություններ և միջոցառումներ,
- մշակել դպրոցում առկա խնդիրների՝ ուսուցիչների հետ համատեղ լուծմանն ուղղված մեխանիզմներ՝ նպատակ ունենալով ուսուցիչների մոտ ստեղծել բավարար վստահություն և անձնակազմի լիարժեք անդամ զգալու հնարավորություն,
- հաճախակի կազմակերպվող քննարկումների միջոցով ուսուցիչների մոտ ձևավորել սեփական գործողությունները ինքնավերլուծելու և ինքնագնահատելու մշակույթ,
- աջակցել ուսուցիչներին իրենց ինքնակրթության գործում,

- անընդհատ մոնիթորինգի ենթարկել դպրոցի տնօրենի տեղակալների կողմից դպրոցի մանկավարժների հետ տարվող անհատական աշխատանքների որակն ու սահմանված սկզբունքներին համապատասխանությունը,
- մշտապես մոնիթորինգի ենթարկել, վերլուծել և օբյեկտիվորեն գնահատել դպրոցի մեթոդական միավորումների կողմից դպրոցի

զարգացման ծրագրում նշված նպատակների իրագործմանն ուղղված աշխատանքները,

- մշտապես մոնիթորինգի ենթարկել, վերլուծել և գնահատել մանկավարժների գործունեությունը հետևյալ ասպարեզներում՝

ուսուցչի գիտելիքների և մանկավարժական արհեստավարժության պահպանում և կատարելագործում,

դպրոցական ընդհանուր ավանդույթների, մշակույթի և բարենպաստ մթնոլորտի ձևավորում և պահպանում,

աշակերտների գիտելիքների, հմտությունների և կարողությունների կատարելագործում,

կրթվելու և ինքնակրթվելու ցանկության առկայություն:

21. ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ

Աշակերտական ինքնավարությունը 2011 թվականի մայիսի 17-ի ՀՀ կրթության և գիտության նախարարի թիվ 571-Ն հրամանով հաստատված աշակերտական խորհրդի կանոնների համաձայն դպրոցում յուրաքանչյուր ուսումնական տարում ձևավորվում է աշակերտական ինքնավարության մարմին: Բոլորը աշակերտական ինքնավարության մեջ պետք է տեսնեն ոչ թե սովորողի կամ մի խումբ սովորողների կողմից մյուսների հանդեպ իշխանության չարաշահման միջոց, այլ քաղաքացիական հասարակության մեջ կառավարելու ընդունակությունների ձեռքբերման և քաղաքացիական հասարակություն տեսնելու համոզմունքի ձևավորման հնարավորություն:

Առաջարկվող միջոցառումների արդյունքում ակնկալվում է, որ դպրոցում՝



22.ԴՊՐՈՑԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐՆ ՈՒ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

Առկա հիմնախնդիրներ	Հիմնախնդիրների լուծման գործողություններ	Պատասխանա-տուներ	Կատարման ժամանակացույց
➢ **Մանկավարժական համակազմի գործունեության բարելավում և կատարելագործում**	1. Ուսուցիչներին ծանոթացնել նոր ՀՊՉ-ի փոփոխություններին և նրանից բխող ծրագրային , առարկայական չափորոշիչներին և մեթոդաբանությանը:	Տնօրեն Տնօրենի ուս. գծով տեղակալ	2023-2025թթ.
	2. Հետաքրքրություն և մոտիվացիա առաջացնել ուսուցիչների տարակարգի շնորման և կամավոր ատեստավորման մասնակցության նկատմամբ: 3. Կատարելագործել ՏՀՏ գործիքներին տիրապետումը:		2023-2028թթ.
	4. ԿԱՊԿՈՒ սովորողների հետ աշխատանքի և ԱՈՒՊ-ների կազմման մեթոդաբանության կիրառման և հմտությունների ձեռք բերման աշխատանքներ:		2023-2028թթ.
➢ **Ավագ դպրոց հաճախող սովորողների թվի պակասում:**	Ավելացնել գրավչությունը ավագ դպրոցում սովորելու նկատմամբ: Շարունակել «Ավտոգործ» առարկայի ուսուցումը և նոր, արհեստագործական ուղղությունների ներդնումը:	Տնօրեն Տնօրենի ուս. գծով տեղակալ Մանկավարժներ	2023-2028թթ.

➢ **Հոգաբարձուների, շրջանավարտների խորհուրդների բացակայություն**	Հնարավորության դեպքում դպրոցի շրջանավարտների, ծնողների և համայնքի օգնությամբ ստեղծել շրջանավարտների կամ հոգաբարձուների խորհուրդներ:	Տնօրեր Շրջանավարտ ներ Ծնողներ համայնքի ներկայացուցիչեր	**2024-2025թթ.**
➢ **Խորհրդակցական մարմինների և կառավարման խորհրդի դերի բարձրացում**	Բարձրացնել խորհրդակցական մարմինների դերի և գործունեության նշանակությունը: Ակտիվացնել համագործակցությունը միմյանց և կառավարման խորհուրդների միջև:	Տնօրեն Կառավարման խորհուրդ Խորհրդակցական մարմիններ	**2023-2028թթ.**
➢ **Սպորտային դահլիճի և սպորտային գույքի ձեռքբերում**	Դպրոցը չունի մարզադահլիճ, սակայն նախատեսում ենք համայնքային մարզադահլիճից անհատույց օգտագործման պայմանավորվածություն ձեռք բերել համայնքի ղեկավարի հետ: Անհրաժեշտ է համալրել նաև մարզադահլիճը համապատասխան գույքով:	Տնօրեն Համայնքի ղեկավար Համակարգող	**Հնարավորության դեպքում՝2023-2024թթ. 2023-2028թթ. / գույքի համալրում/**
➢ **Աշակերտների առողջության պահպանում**	Օրենքով սահմանված կարգով սովորողների առողջության պահպանում:	Տնօրեն Տնօրենի տեղակալներ, Դասղեկներ Բուժքույր Ծնողական խորհուրդ	**2023-2028թթ.**
➢ **Նյութատեխնիկական բազայի հարստացում**	1. Լաբորատորիաների համար պարբերաբար ձեռք բերել փորձերի նյութեր: 2. Թարմացնել համակարգիչների ու նոթբուքերի ծրագրերը: 3. Ձեռք բերել նոր պրոյեկտորներ:	Տնօրեն Համակարգող	**2023-2028թթ.**
	4. «Ավտոգործ» առակայի կաբինետի համար ձեռք բերել համապատասխան նյութեր, դիդակտիկ պարագաներ և պաստառներ:		**2023-2024թթ.**

23.Առաջարկվող միջոցառումների արդյունքում ակնկալվում է, որ դպրոցում՝

- կհամախմբվի աշակերտական համակազմը,
- կձևավորվեն նոր ավանդույթներ և կպահպանվեն հները,
- սովորողները ձեռք կբերեն կյանքի հմտություններ,
- կբարձրանա միջոցառումներին մասնակցելու սովորողների ցանկությունն ու պատրաստակամությունը,
- անհատի ինքնաբացահայտման և ինքնակայացման համար կստեղծվեն անհրաժեշտ պայմաններ,
- կբարձրանան կարգապահությունը, մանկավարժական կոլեկտիվի պատասխանատվությունը
- վերջնարդյունքում՝ աշակերտի կյանքում կբարձրանա դպրոցի դերը։

24.ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Զարգացման ծրագրում մեր կողմից նախատեսված միջոցառումների բարեհաջող կատարման արդյունքում ակնկալվում է, որ դպրոցում՝

- բոլոր սովորողներին կտրամադրվի հնարավորինս ժամանակակից և որակյալ կրթություն,
- կընդլայնվեն սովորողների՝ որպես անհատների կայացման համար անհրաժեշտ շնախադրյալները,
- կավելանա աշակերտների առողջության պահպանմանը նպաստող նախապայմանները,
- աշխատանքները կկազմակերպվեն նյութատեխնիկական նորացված բազայի հիման վրա,
- կբարելավվեն ուսուցիչների և դասղեկների մասնագիտական և նախաձեռնողական որակները,
- կձևավորվի հոգաբարձուների և շրջանավարտների խորհուրդներ,
- կընդլայնվեն ծնողական և աշակերտական խորհուրդների դերը և ընդգրկվածությունը դպրոցի կառավարման խորհրդում,
- կմեծանա դպրոցի և կրթության նկատմամբ յուրաքանչյուր սովորողի և իր ընտանիքի վերաբերմունքն ու պատասխանատվության զգացումը:

Ակնկալվում է, որ թվարկված բոլոր արդյունքները վերջնահաշվում կնպաստեն դպրոցի վարկանիշային ցուցանիշի աճին՝ խթանելով դեպի դպրոց աշակերտների առավել մեծ ներհոսքը:

25. ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ, ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Դպրոցի զարգացման ծրագրի գնահատումը ծրագրի գործողություններով պլանավորած և իրականացված արդյունքների համեմատման գործընթացն է: Որպես գնահատման գործիքներ պետք է ծառայեն յուրաքանչյուր գործողության առանձնահատկությունից բխող ցուցանիշները, որոնց միջոցով պետք է չափվեն ակնկալիքների կատարողականները, այլ կերպ ասած, դպրոցի զարգացման ծրագրին իրականացնող ու վերահսկող շահառուները (դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինները)՝ գործողությունների արդյունքների բավարարվածության աստիճանը: Ցուցանիշները ամբողջացնում, ամփոփում են մեծ ծավալի վիճակագրական տվյալները և տալիս են իրավիճակի ընդհանուր պատկերը: Ցուցանիշները անհրաժեշտ են նաև ժամանակի ընթացքում դպրոցի գործունեության մեջ տեղի ունեցող փոփոխությունները, ուղղությունները բացահայտելու և գնահատելու համար:

Դպրոցի զարգացման ծրագրի վերահսկողությունը իրականացնում է դպրոցի խորհուրդը՝ հանրակրթության ոլորտը կանոնակարգող օրենսդրության համաձայն: Ծրագրի իրականացման վերահսկողության ամենաարդյունավետ միջոցը 5-ամյա ծրագրի հիման վրա կազմված դպրոցի գործունեության տարեկան աշխատանքային պլանների կատարողականներն են:

Ժամանակի պահանջներից և իրավիճակներից ելնելով՝ սույն ծրագիրը ենթակա է լրամշակման և փոփոխման:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԻԴԱԵՐՈՒՆԴ KOREEZ

ԴԱՏԱՐԱՆ

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՆԻՍՏԸ ԲՁՆԻՈՒՄ

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԾԱՌԱՏՈՒՆԿ՝
Ի ՀԻՇԱՏԱԿ 44 ՕՐՅԱ
ՊԱՏԵՐԱԶՄԻ ԶՈՐԵՐԻ

ՄԵՐ ԴՊՐՈՑԻ

ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ

ՊԱՏՎՈ ԱՆԿՅՈՒՆ

ԱՌԱՋ ՀԵՏՈ

ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ



ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎԻՆ

ԻՄ ԿՅԱՆՔԸ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄ